Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

«Հանրային քաղաքականության հետազոտությունների կրթաթոշակներ» ծրագիր

ՀՀ-ում զբաղվածության հիմնահարցերն ու դրանց հետ կապված պետական ծրագրերը

«Հայաստանյան աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդների զբաղվածության հիմնահարցը, տվյալ ոլորտում գործող սոցիալական քաղաքականությունը. իրավիճակ և հեռանկարներ»

Հեղինակ՝ **Լուսինե Քարամյան**

Երևան
Հուլիս, 2020

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ հանրային քաղաքականության հետազոտությունների կրթաթոշակներ ծրագրի շրջանակներում: Զեկույցում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակի տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:

Բովանդակություն

Հապավումներ……... ..3

Ընդհանուր ակնարկ……..… 4

Ներածություն……... 5

Հետազոտության արդիականությունը, նպատակը և խնդիրները…… 8

*ՀՀ երիտասարդ քաղաքացիների շրջանում գործազրկության ցուցանիշները վերջին տարիներին……..……..…*10

Հետազոտության արդյունքների վերլուծություն……....13

Երիտասարդների մասնագիտական կողմնորոշմանը և զբաղվածությանն առնչվող որոշ օրինակներ միջազգային և տեղական պրակտիկաներից..... 22

Եզրակացություն…….. 32

Հետազոտության արդյունքների հիման վրա ձևավորված առաջարկություններ……34

Օգտագործված գրականության և առցանց աղբյուրների ցանկ……..……39

Հավելված 1 Փորձագիտական հարցման հարցաշար

Հավելված 2 ՀՀ զբաղվածության քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական կառույցների ու ՄԿԿԶԿ մասնագետների հետ ֆոկուս խմբի ուղեցույց

Հավելված 3 ՀՀ աշխատաշուկայում ցածր մրցունակությամբ երիտասարդների՝ ընդհանուր տիպի մանկատների շրջանավարտների հետ ֆոկուս խմբի ուղեցույց

Հապավումներ

ԱԾԽՄԵ – Առանց ծնողական խնամքի մնացած երեխա

ՀՀ ԱՍՀՆ – Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ՄԿԿԶԿ - Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոն

ԶՊԳ – Զբաղվածության պետական գործակալություն

ԶՏԿ – Զբաղվածության տարածքային կենտրոն

ԶՄԿ – Զբաղվածության մարզային կենտրոն

ՍԱՏԳ – Սոցիալական աջակցության տարածքային գործակալություն

ՄԿՈՒ – Մասնագիտական կրթություն և ուսուցում

ԱՄԿ – Աշխատանքի միջազգային կազմակերպություն

ՀԲ – Համաշխարհային բանկ

Ընդհանուր ակնարկ

«Հանրային քաղաքականության կրթաթոշակներ» *նախաձեռնության շրջանակներում 2020 թվականի հունվարից հուլիս ընկած ժամանակահատվածում իրականացվել է հայաստանյան աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդների, մասնավորապես մանկատան շրջանավարտների զբաղվածության հիմնահարցի ու տվյալ ոլորտում գործող սոցիալական քաղաքականության հետ կապված իրավիճակի և հեռանկարների բացահայտմանն ուղղված որակական հետազոտություն: Այդ ամիսների ընթացքում մշակվել են տվյալ հետազոտության ծրագիրն ու հետազոտական գործիքները, ուսումնասիրվել են թեմային առնչվող փաստաթղթեր և այլ հետազոտություններ, մասնավորապես Հայաստանում ՀԲ-ի կողմից 2019 թվականին արված վերլուծության հիման վրա հոկտեմբերի զեկույցը, իրականացվել են դաշտային աշխատանքները, սակայն համավարակով պայմանավորված իրավիճակի պատճառով դրանք հնարավոր է եղել իրականացնել միայն հեռավար եղանակով: Հարցվողները եղել են ոլորտի փորձագետներ, ՀՀ ԱՍՀՆ Զբաղվածության բաժնի, ԶՄԿ-ի, Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոնի մասնագետներ, ինչպես նաև ՀՀ մանկատների շրջանավարտներ:*

Տվյալ հետազոտական նախագծի նպատակն է բացահայտել, թե ներկայումս գործող զբաղվածության պետական ծրագրերը որքանով և ինչպես են ապահովում ԱԾԽՄ կարգավիճակ ունեցած ընդհանուր տիպի մանկատան կամ այլընտրանքային խնամք ապահովող կառույցների շրջանավարտների, այդ թվում անմրցունակ ու մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի ներառումն աշխատաշուկա, ինչպես նաև մշակել տվյալ ոլորտում առկա քաղաքականության բարելավմանն ուղղված առաջարկներ և ուրվագծել դրա հեռանկարները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս հայաստանյան ներքին քաղաքականության, այդ թվում սոցիալական քաղաքականության մեջ նկատելի փոփոխություններ են իրականացվում, մյուս կողմից հետազոտության թիրախ հանդիսացող խոցելի խմբի զբաղվածության հարցը առայժմ չի կարգավորվում որևէ առանձին պետական ծրագրով, սակայն շարունակում է մնալ արդիական ու քիչ ուսումնասիրված, ճիշտ ժամանակն է ավելի խորը վերլուծելու տվյալ հիմնահարցը, դրա վրա ազդող գործոնները և նախաձեռնելու ցանկալի փոփոխություններ: Այս հետազոտական նախագիծը կարող է խթանել այդ փոփոխությունների մեկնարկը և օգնել ուրվագծել Հայաստանում խոցելի, ցածր մրցունակություն ունեցող երիտասարդներին ուղղված հանրային քաղաքականության հեռանկարները:

Ներածություն

Ցանկացած սոցիալական պետության ներքին քաղաքականության բաղկացուցիչ տարրերից է հանդիսանում սոցիալական քաղաքականությունը, որը ենթադրում է համալիր միջոցառումներ՝ ուղղված բնակչության կյանքի որակի պահպանմանը, խոցելի խմբերի համար տարբեր թիրախային ծրագրերի իրականացմանը, զբաղվածության ապահովմանը և այլն:

Զբաղվածության ոլորտում ՀՀ սոցիալական քաղաքականության մեջ դեռևս տեսանելի փոփոխություններ տեղի չեն ունեցել, մինչդեռ գործազրկությունը, այդ թվում երիտասարդների շրջանում, բավականին արդիական հիմնախնդիր է: Զբաղվածության գործող ծրագրերի ցածր արդյունավետության մասին կարող է վկայել մի քանի տարի շարունակ պահպանվող գործազրկության բարձր ցուցանիշը: Գործազրկության պատճառները բազմազան են, հետևաբար հիմնախնդրին հասցեականորեն արձագանքող պետական ծրագրերը պետք է անդրադառնան այդ բոլոր պատճառներին, ներառյալ աշխատաշուկայում խտրականության բոլոր դրսևորումներին:

Տվյալ հետազոտական նախագծի շրջանակներում նախատեսված ժամկետների և ռեսուրսների պարագայում աշխատաշուկայում խտրականության բոլոր դրսևորումների, հատկապես անտեսանելի խտրականությանը առնչվող իրավիճակի, ու ներառականության խթանմանը նպաստող ծրագրերի ուսումնասիրություն իրականացնելն անիրատեսական է: Նախնական ուսումնասիրությունը (desk review) ցույց տվեց, որ խտրականության որոշ ձևերի հետ կապված բավականաչափ հետազոտություններ կան, մասնավորապես հաշմանդամություն ունեցողների զբաղվածության, ինչպես նաև աշխատաշուկայում գենդերային խտրականության հետ կապված, բայց մի շարք այլ խոցելի խմբերի զբաղվածությանն առնչվող իրավիճակը և հեռանկարները գրեթե ուսումնասիրված չեն: Նպատակային է ընտրել առավել արդիական և հետազոտողների ուշադրությունից գրեթե դուրս մնացած ծրագրերն ու թիրախ խմբերը: Մասնավորապես, տվյալ ուսումնասիրության թիրախ ծրագիր է *«Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում»* ծրագիրը և այն ծրագրերը, որոնք որևէ կերպ առնչվում են «բնակչության սոցիալական

պաշտպանության հաստատության (մանկատան)» շրջանավարտների զբաղվածության հետ կապված հարցերին: Այս երկու թիրախ խմբերը և նշված ծրագրերն ունեն վերածածկույթ, քանի որ մանկատների շրջանավարտների շրջանում անմրցունակ երիտասարդ մայրերի թիվը փոքր չէ:

«Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում» ծրագրի նպատակն է այդ մայրերի աշխատանքային կարողությունների՝ աշխատանքի վայրում ձեռքբերման հնարավորությունների ընձեռնման միջոցով կայուն զբաղվածության ապահովումը, որի իրավական հիմքը հանդիսանում է ՀՀ կառավարության **17.04.2014-ի թիվ 534-Ն** որոշումը: Այդ որոշման N22 հավելվածի 3-րդ կետի համաձայն՝ *«Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում»* ծրագրում ընդգրկվելու առաջնահերթությունը տրվում է այն անմրցունակ անձին, ով՝

- ունի երեք և ավելի երեխա,
- նրա ընտանիքն ստանում է ընտանեկան կամ սոցիալական նպաստ,
- սոցիալական դեպքի վարման շրջանակներում սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի) կողմից ներկայացված անձ է,
- բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության (մանկատան) շրջանավարտ է:

Տվյալ ծրագրի տևողությունը մինչև վեց ամիս է: 2018 թվականին նախատեսված է եղել 100 շահառուի համար 72404.3 հազար դրամ բյուջե: 2019 թվականին նախատեսված է եղել 107 շահառուի համար 63556.2 հազար դրամ պետական բյուջեից: Նախորդ տարվա առաջին եռամսյակի ընթացքում նախատեսված 50 շահառուի փոխարեն ծրագրում ընդգրկվել է 33 հոգի, ինչի արդյունքում այդ եռամսյակի համար հատկացված բյուջեի ընդամենը 34,12%-ն է ծախսվել: Այդուհանդերձ, սույն թվականի համար, ՀՀ կառավարության 30.09.2019-ի N1290-Լ որոշման համաձայն, նախատեսված է եղել 200 շահառուի՝ գործատուի մոտ մասնագիտական ուսուցման

կազմակերպման աջակցության տրամադրում պետական բյուջեից 113.454 հազար դրամ սահմաններում:[1]

«Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում» ծրագրի շրջանակներում ներկայումս շահառու են դիտարկվում աշխատաշուկայում անմրցունակ մայրերը՝ անկախ տարիքից և առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործելու հանգամանքից: Այս փոփոխությամբ ապահովվում է ուսուցման կարիք ունեցող կանանց հնարավորինս լայն խմբի ընդգրկում ծրագրում:

Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության (մանկատան) շրջանավարտները և սոցիալական դեպքի վարման շրջանակներում սոցիալական աջակցության տարածքային գործակալության կողմից Զբաղվածության տարածքային կենտրոններ ուղղորդված անձինք ճանաչվում են աշխատաշուկայում անմրցունակ: Այս փոփոխությամբ նրանց հնարավորություն է տրվում առաջնահերթության կարգով ընդգրկվելու զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում: Մանկատան սաների համար հանվել է նաև «Փոքր բիզնեսի աջակցություն» ծրագրում ընդգրկվելու համար երաշխավոր ունենալու նախապայմանը: Նախատեսվում է, որ ծրագրի շահառուները առաջնահերթության կարգով կընդգրկվեն զբաղվածության պետական ծրագրերում, քանի որ մանկատան շրջանավարտները հիմնականում չունեն համապատասխան կրթություն և հմտություններ, ինչի պատճառով աշխատաշուկայում առավել խոցելի են համարվում:[2]

Տվյալ հետազոտական նախագծի վերջնարդյունքներից են առաջարկությունները (recommendations) այն շահագրգիռ կողմերին, պետական կառույցներին, որոնք որևէ կերպ առնչվում են կամ պետք է առնչվեն երիտասարդների, մասնավորապես ԱԾԽՄ կարգավիճակ ունեցած և կենսաբանական ընտանիքից դուրս սոցիալականացված երիտասարդների զբաղվածության հիմնահարցին:

[1] http://www.irtek.am/views/act.aspx?aid=101624
[2] http://www.mlsa.am/?p=24223

Հետազոտության արդիականությունը, նպատակը և խնդիրները

Ներկայումս ՀՀ ԱՍՀ նախարարությունը, խիստ արդիական ու առաջնահերթ համարելով հատկապես մանկատան շրջանավարտների հիմնախնդիրները, նախաձեռնել է քաղաքականության փոփոխություններ, ծրագիր՝ ուղղված այդ թիրախ խմբին բնակարաններով ապահովելուն: Մասնավորապես, տրամադրվում են սերտիֆիկատներ 6300000 դրամ արժողությամբ, որոնք հնարավորություն են տալիս գնելու մեկ սենյականոց բնակարան մայրաքաղաքի ծայրամասերում կամ սեփական ոչ մեծ տուն մարզերում, բայց ավելի բարենպաստ պայմաններով, ընդ որում մարզում գնելու պարագայում առաջարկվում է մասնագիտական վերապատրաստում աշխատատեղ գտնելու և մինչև 1000000 դրամի աջակցություն փոքր բիզնես սկսելու համար:

Հարկ է նշել, որ 2003-2013 թ.թ. ընթացքում ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն իրականացրել է «Պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագիրը, որի իրագործման համար հիմք են հանդիսացել ԵՄ Եվրահանձնաժողովի պարենային ապահովության ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության հետ 2001 թվականին ստորագրված փոխըմբռնման հուշագրի նախապայմանները: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

1. միանվագ դրամական օգնություն – 233 շրջանավարտի,
2. կրթաթոշակ – 103 շրջանավարտի,
3. մասնագիտական կողմնորոշում, ուսուցում, վերապատրաստում–212 շրջանավարտի,
4. բժշկական ծառայություն – 252 շրջանավարտի,
5. բնակարանի տրամադրում - 160 շրջանավարտի:[3]

2019 թվականին բնակարանային աջակցության ծրագիրը վերսկսվել է: Մանկատան շրջանավարտներին բնակարանի գնման վկայագրերի տրամադրման գործընթացը մեկնարկել է 2019 թ. դեկտեմբերից՝ Կառավարության համապատասխան

[3] http://lori.mtad.am/files/docs/11628.pdf

որոշման ընդունումից հետո: Որոշումը վերաբերում է մանկատան 300 շրջանավարտների: [4]

2003 թվականից հետո ՀՀ ԱՍՀՆ կողմից մշակվել և մանկական խնամակալական հաստատություններ են ներմուծվել խնամքի որոշ կարևոր չափորոշիչներ: Դրանք, մասնավորապես, կապված են կյանքի հմտությունների զարգացման հետ, սակայն, այնուամենայնիվ, պետական մանկատանը խնամվող երեխաների և երիտասարդների առօրյայի և հետագա կյանքի կազմակերպման որոշ ասպեկտներ առ այսօր էլ բաց են մնում: Դրանցից է նրանց մասնագիտական կողմնորոշումը և աշխատաշուկա մուտք գործելու ու դրանում մրցունակ լինելու համար անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ձևավորումը: Արդյունքում այնպես է ստացվում, որ նրանք հիմնականում պատրաստ չեն լինում ինքուրույն կյանքի, երբ դուրս են գալիս մանկատնից: Միևնույն ժամանակ, ժամանակակից երիտասարդության համար կարևոր է սկսել կարիերան կամ առաջին քայլերը աշխատաշուկայում հնարավորինս շուտ՝ մասնավորապես ֆինանսական անկախություն ունենալու և աշխատանքային փորձ ձեռքբերելու տեսանկյունից:

Այնուամենայնիվ, տվյալ ոլորտում փաստերի վրա հիմնված քաղաքականություն մշակելու համար բավարար հետազոտական տվյալներ, հիմնավորումներ չկան: Այդ երիտասարդների իրական կարիքները, կյանքի հմտությունները, նախապատվությունները բավարար ուսումնասիրված չեն, և չկան երաշխիքներ, որ տվյալ քաղաքականությունն արդյունավետ կլինի: Որևէ կանխատեսում անել ու երաշխավորել, որ բնակարանների զգալի մասը Երևանում չի գնվի, արդյունքում զբաղվածության հարցը չի շարունակի մնալ արդիական, իսկ բնակարանները կծառայեն այն նպատակին, որի համար ձեռք են բերվել, դժվար է: Այս թիրախ խմբի ներկայացուցիչները տարիներ շարունակ ենթարկվել ու ենթարկվում են խոցելիության բազմաթիվ գործոնների բացասական ազդեցությանը, և միայն կացարան ունենալով նրանց կյանքի որակի կտրուկ փոփոխություն ակնկալելն անիրատեսական է: Խիստ կարևոր է համալիր մոտեցումը նրանց կարիքներին և աջակցությանը, հատկապես կարևորելով զբաղվածության հարցը:

[4] http://www.mlsa.am/?p=25011

ՀՀ երիտասարդ քաղաքացիների շրջանում գործազրկության ցուցանիշները վերջին տարիներին

2019 թվականի վերջին ՀԲ-ի կողմից հրատարակված ՀՀ-ում աշխատատեղերի դինամիկայի վերլուծություն հանդիսացող զեկույցի համաձայն՝ «աշխատանքային զբաղվածություն չունեցող, չսովորող կամ ուսուցում չանցնող երիտասարդների տեսակարար կշիռը տարածաշրջանում ամենաբարձրներից մեկն է»: Ընդ որում 15-24 տ. երիտասարդների շրջանում աշխատանքային զբաղվածություն չունեցողների տոկոսը (27%) ավելի քան կրկնակի գերազանցում է ԵՄ 28 երկրների 11% միջին ցուցանիշը, ավելին, 15-29 տ. երիտասարդների շրջանում այն կազմում է 33%, ընդ որում վերջիններիս խմբում հատկապես բարձր է կանանց գործազրկության ցուցանիշը՝ 42%: [5]

Պատկեր 1. Երիտասարդության շրջանում գործազրկության ցուցանիշները ՀՀ-ում [6]



Ինչպես երևում է տվյալ պատկերում՝ վերջին տասը տարիների ընթացքում գործազուրկ երիտասարդների թիվը կայուն բարձր է: 2019 թվականին 15-24 տարեկան հայաստանցիների մոտավորապես 35.5%-ը կազմել են զբաղվածություն չունեցող երիտասարդները: ԱՄԿ-ի 2018 թվականի տվյալների համաձայն՝ գործազուրկ երիտասարդները կազմել են բնակչության 33.6%-ը, ընդ որում նրանցից 39%-ը իգական սեռի ներկայացուցիչներն են, 29.1%-ը՝ արական: [7]

Երիտասարդների գործազրկության հիմնախնդրի գենդերային ասպեկտը ևս կարևոր է: Այս առումով գենդերային տարբերությունները հատկապես տեսանելի են

[5] «Աշխատանք Հայաստանում ավելի լավ ապագայի համար. աշխատատեղերի դինամիկայի վերլուծություն», Համաշխարհային Բանկ, Հոկտեմբեր, 2019, էջ 114:
[6] https://www.theglobaleconomy.com/Armenia/youth_unemployment/
[7] https://ilostat.ilo.org/data/country-profiles/

դառնում 25-39 տարիքային խմբում, այսինքն, կանանց վերարտադրողական առավել ակտիվ շրջանում: Այս տարիքային խմբի կանանց 72%-ը գործազրկության և աշխատանք չփնտրելու առաջնային պատճառ նշել են ընտանեկան հանգամանքները՝ մայրանալն ու տնային պարտականությունները: 2017 թվականին ՀԲ-ի կողմից Հայաստանում իրականացված բազմաչափումային վերլուծությունը ցույց է տվել ամուսնություն-մայրություն-աշխատաշուկայում կանանց ցածր մասնակցություն շղթայում առկա ուղղակի կապը:[8] Այս ցուցանիշները հիմնավորում են երիտասարդ մայրերին զբաղվածության ոլորտում պետական աջակցություն տրամադրելու անհրաժեշտությունը, սակայն միայն զբաղվածության պետական ծրագրերով այս պատկերը լիովին փոխել հնրավոր չի լինի, քանի որ առկա են սոցիալ-մշակութային խոչընդոտներ և գենդերային կարծրատիպեր հայաստանյան հասարակությունում: Թերևս այս գործոնների ազդեցության թերագնահատումն է պատճառներից մեկը, որ երիտասարդ անմրցունակ ու մասնագիտություն չունեցող մայրերին հասցեագրված զբաղվածության պետական ծրագիրը նկատելի արդյունքներ ու փոփոխություններ չի առաջացնում թիրախ խմբի շրջանում:

Հետազոտության նպատակը

Ուսումնասիրել և պարզել, թե ներկայումս ՀՀ-ում գործող զբաղվածության պետական ծրագրերը որքանով և ինչպես են ապահովում ԱԾԽՄ կարգավիճակ ունեցած ընդհանուր տիպի մանկատան կամ այլընտրանքային խնամք ապահովող կառույցների շրջանավարտների, այդ թվում անմրցունակ ու մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի, ներառումն աշխատաշուկա, վերհանել այն փաստարկներն ու հակափաստարկները, հակասություններն ու հնարավոր լուծումները, որոնք կնպաստեն ուսումնասիրվող հարցի շուրջ օրակարգի և հանրային քաղաքականության ձևավորմանը:

Հետազոտության խնդիրները

1. Պարզել, թե 2000 թվականից առ այսօր ընդհանուր տիպի պետական մանկատան շրջանավարտի կարգավիճակ ունեցող քանի ՀՀ քաղաքացի կա, նրանցից քանի՞սն է ստացել պետական աջակցություն և ինչպիսի՞:

[8] «Աշխատանք Հայաստանում ավելի լավ ապագայի համար. աշխատատեղերի դինամիկայի վերլուծություն», Համաշխարհային Բանկ, Հոկտեմբեր, 2019, էջ 80:

2. Պարզել, ինչպիսի՞ն է վերոնշյալ թիրախ խմբին հասցեագրված ներկայիս քաղաքականությունը, աջակցության ինչպիսի՞ պետական ծրագրեր են գործում, և ինչպիսի հեռանկարներ կան։
3. Պարզել, ո՞րքանով են այդ ծրագրերը խթանում նրանց զբաղվածությունն ու կայուն սեփական եկամուտ ունենալը։
4. Պարզել, ո՞րքանով են այդ ծրագրերը նպաստում աշխատաշուկայում արդյունավետորեն գործառնելու համար անհրաժեշտ հմտությունների ձևավորմանը թիրախ խմբի շրջանում։
5. Պարզել ԶՏԿ-ի դերը թիրախ խմբին աշխատաշուկա ներառելու առումով։
6. Ուսումնասիրել մասնագիտական կողմնորոշման հետ կապված ծրագրերը և դրանցում թիրախ խմբի ներգրավվածության աստիճանը դպրոցներում, ՄԿՈՒ ոլորտում և ՍՕՏԿ-ում։

Հետազոտության ընթացքում տեղեկատվության հավաքագրումը

Հետազոտությունը որակական է և ենթադրում է մի քանի որակական մեթոդի կիրառում՝ փաստաթղթերի վերլուծություն, ֆոկուս-խումբ և փորձագիտական հարցում Դելֆի եղանակով, որի նպատակն է երեք փուլով հավաքագրել և վերլուծել տվյալ հիմնահարցի վերաբերյալ փորձագիտական կարծիքները։ Ամեն հաջորդ փուլում փորձագետները ունենում են հնարավորություն տեսնելու նախորդ փուլում իրենց գործընկերների պատասխանները (անանուն) և դրանց ծանոթանալուց հետո նորից պատասխանելու հարցերին։

Հետազոտության արդյունքերի վերլուծություն

Տվյալ հետազոտական նախագծի դաշտային աշխատանքների՝ որակական տվյալների հավաքագրման փուլում կիրառվել է մի քանի մեթոդ, որոնցից առաջինը եղել է հեռավար եղանակով, Դելֆի մեթոդով իրականացված փորձագիտական հարցումը ոլորտին քաջատեղյակ ու փորձառու մասնագետների շրջանում: Դրանից բացի նախատեսված է եղել երկու ֆոկուս խումբ իրականացնել, որոնցից մեկը ընդհանուր տիպի պետական և ոչ պետական մանկատների շրջանավարտների հետ, իսկ մյուսը ՁՏԿ/ՁՄԿ-ների ղեկավարների կամ ներկայացուցիչ այլ մասնագետների, ՍԱՏԳ մասնագետների, ԱՍՀՆ Աշխատանքի և զբաղվածության վարչության, Ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների վարչության, ինչպես նաև ՄԿԿՁԿ-ի ներկայացուցիչների հետ:

Համավարակով պայմանավորված արտակարգ իրավիճակի պայմաններում չհաջողվեց իրականացնել նախատեսված ֆոկուս խմբերից մեկը, սակայն մասնակցության հրավերն ստացած այն մասնագետների հետ, ովքեր հաստատել էին իրենց մասնակցությունը հետազոտությանը, իրականացվել են առանձին խորքային հարցազրույցներ հեռավար եղանակով: Հարցվողները հանդիսացել են ՀՀ ԱՍՀՆ Աշխատանքի և զբաղվածության վարչության Զբաղվածության բաժնի, զբաղվածության մարզային կենտրոններից մեկի, ինչպես նաև ՀՀ ԱՍՀ Ազգային ինստիտուտին կից գործող «Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոնի» ներակայացուցիչներ:

Առցանց աղբյուրներում մանկատան շրջանավարտների վերաբերյալ սակավաթիվ տեղական հոդվածներից մեկում նշվում է, որ Հայաստանում տարեկան մոտ 30 երիտասարդ է դառնում մանկատան շրջանավարտ:[9] Սույն հետազոտական նախագծի շրջանակներում ՀՀ ԱՍՀՆ արված պաշտոնական հարցման արդյունքում պարզվել է, որ 2000 թվականից սկսած նման թիվ երբևէ չի արձանագրվել պաշտոնական վիճակագրության մեջ: Ամենաբարձր թիվը արձանագրվել է 2006 թվականին՝ **25** շրջանավարտ, իսկ ընդհանուր առմամբ 2000-2020թթ. ընթացքում ընդհանուր տիպի պետական մանկատան շրջանավարտ է դարձել **205** երիտասարդ: Որոշ տարիներին (2000, 2001) առհասարակ որևէ շրջանավարտ չի եղել: Այս հարցումն իրականացնելն անհրաժեշտություն էր, քանի որ մանկատան շրջանավարտների վերաբերյալ որևէ հասանելի պաշտոնական վիճակագրություն կամ այլ տվյալներ չկան, որևէ հետազոտող չի կարող հստակ թվեր նշել, քանի որ դրանց վերաբերյալ շտեմարան ստեղծված չէ կամ առնվազն հասանելի չէ յուրաքանչյուր քաղաքացու: Մինչդեռ կարևոր է հասկանալ, թե ինչպիսի թիրախ խմբի, հիմնախնդիրների ինչպիսի մասնաբների հետ գործ ունի տվյալ ոլորտում քաղաքականություն մշակողը, ում և տարեկան միջինում քանի հոգու է հասցեագրված աջակցությունը, մասնավորապես, զբաղվածության քաղաքականությունը:

[9] https://iwpr.net/global-voices/armenia-orphans-struggle-overcome-stigma

Փորձագիտական հարցմանը մասնակցել է ութ փորձագետ: Նրանք հնարավորություն են ունեցել հարցման ամեն հաջորդ փուլում տեսնելու մյուսների պատասխանները և կրկին վերահաստատելու կամ լրացնելու քննարկվող հարցերի շուրջ սեփական տեսակետն ու դիրքորոշումները: Եղել են նաև մերժումներ, երբ աշխատանքային իրավունքների ու զբաղվածության հարցերով կոմպետենտ փորձագետները խոստովանել են, որ մանկատան շրջանավարտների հետ կապված հարցերում իրենց փորձագետ չեն համարում և հարցերից շատերին պատասխանել չեն կարողանա: Սա կարող է վկայել նրա մասին, որ ուսումնասիրության առարկայի վերաբերյալ հետազոտությունների ու փորձագիտական կարծիքի պակաս կա Հայաստանում, ինչը կրկին խոսում է այս և նմանատիպ հետազոտությունների արդիական ու պահանջված լինելու մասին:

«*Արդյո՞ք աշխատաշուկայում անմրցունակ եւ մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար նախատեսված ծրագիրը համարում եք արդիական և ինչու՞*» հարցին փորձագետների զգալի մասը նշել է, որ արդիական է խոցելի երիտասարդներին, այդ թվում անմրցունակ երիտասարդ մայրերին աջակցելը, սակայն ներկայումս գործող ծրագրում առկա են որոշակի բացեր: Այսինքն, գաղափարն ինքնին արդիական է, սակայն դրա գործնական նշանակությունը, կիրառելիությունը և արդյունավետությունը փորձագետների մոտ կասկած են հարուցում: Փորձագետներից ոմանք գտնում են, որ ծրագրի իրականացման մեխանիզմներում կան բացեր, մասնավորապես, գործնականում ծագում են դժվարություններ աշխատաշուկա – գործատու – ծրագրի շահառու փոխշահավետ հարաբերությունների հարթությունում:

- «Տեսականորեն ծրագիրն արդյունավետ է, գործնականում, բազմիցս առչվելով զբաղվածության ծրագրերին, հանգել եմ այն եզրակացության, որ մատչելիության խնդիր ունեն, այսինքն հասանելի և մատչելի չեն, քանի որ ընթացակարգային բազում պահանջներ և պայմաններ են դրված»: (փորձագետ)
- «Ծրագրի գաղափարն արդիական է, սակայն ինքնին ծրագիրը և դրա իրականացման ընթացքը շատ խնդրահայույց են: Ծրագիրը չի մշակվել ուսումնասիրության և կարիքի գնահատման վրա: Ծրագրին դիմելու պայմանների ու ժամկետների մասին չի կատարվում պատշաճ իրազեկում, մասնակիցների ընտրության ընթացակարգերը այնքան էլ հստակ չեն, չկա ծրագրի ազդեցության գնահատում»: (փորձագետ)
- «Թերահավատորեն եմ մոտենում հատկապես պետության կողմից իրականացնող այդ ծրագրերին, ոչ այն առումով, որ շահառուները աշխատանք չեն գտնի, հավանաբար որոշակի արդյունավետություն ունեն այդ ծրագրերը, այլ ավելի շատ այն առումով, որ միևնույնն է աշխատավարձերը և աշխատանքային այլ պայմանները լինելու են ցանկալիից վատ վիճակում:» (փորձագետ)

- «Աշխատաշուկայի սահմանափակ լինելը և գործազրկության բարձր մակարդակը որոշակի կրթություն և մասնագիտական հմտություններ ունեցող մարդկանց շրջանում գործատուների համար ստեղծում են բարենպաստ պայմաններ լինելու թելադրողի դերում և ընտրելու այնպիսի աշխատողների, ովքեր արագ կինտեգրվեն կազմակերպությանը և կսկսեն հմտորեն իրականացնել աշխատանքը, հատկապես մասնավոր հատվածում, ուր գործում է «ժամանակը փող է» սկզբունքը»:

Այդպիսով, ներկայումս գործող զբաղվածության պետական ծրագրերի զգալի մասի վերաբերյալ փորձագետների տեսակետները համընկնում են այն առումով, որ դրանցում որոշ հիմնահարցեր հաշվի առնված չեն, հետևաբար դրանց արդյունավետությունը կասկածի տակ է դրվում:

Օրինակ, ըստ փորձագետներից մեկի սեփական վերլուծության, ամենամեծ խնդիրը, որն առկա է այդ ծրագերի հետ կապված, առընչվում է թիրախային խմբերի մոտ գիտելիքների և հմտությունների զարգացման ու ձևավորման անհրաժեշտությանը, այդ թվում այնպիսի գիտելիքների և հմտությունների, ինչպիսիք են՝

- ✓ բյուջետավորումը,
- ✓ նախագծերի կառավարումը,
- ✓ բիզնես պլանավորումը,
- ✓ հայաստանյան օրենսդրության՝ հարկային, աշխատանքային և քաղաքացիական օրենսգրքերի մասին գիտելիքները:

Հիմնախնդիրներից մեկը, որն այդքան էլ չի վերաբերում զբաղվածության ծրագրերին, բայց շատ մեծ խոչընդոտ է հանդիսանում երիտասարդ մայրերի համար շուկայում մրցունակ լինելու առումով, վերաբերում է նախադպրոցական հաստատությունների բացակայությանը գյուղական համայնքների գերակշիռ մասում, իսկ քաղաքներում գործող մանկապարտեզներում հաճախ տեղերի սակավությանը, որի պատճառով ծնողն ստիպված է տևական ժամանակ սպասել, մինչ իր երեխայի հերթը պետական մանկապարտեզում կհասնի: Դա հնարավորություն չի տալիս մայրերին ունենալու բավարար ազատ ժամանակ կրթությամբ և տնտեսական գործունեությամբ զբաղվելու համար: Այս իրավիճակի մասին են վկայում նաև ՀԲ-ի վերոնշյալ զեկույցի տվյալները:

Բացերի ու խոչընդոտների մյուս խումբը վերաբերում է մենթորության և խորհրդատվության բացակայությանը կամ ցածր որակին:

«Այն մայրերը, ովքեր որոշում են աշխատանք գտնել կամ զբաղվել բիզնեսով, չեն ստանում կայուն և համեմատաբար երկարաժամկետ խորհրդատվություն և մենթորություն:» (փորձագետ)

Հարցին, թե որքանով է վերոնշյալ ծրագիրը նպաստում մանկատան շրջանավարտերի՝ աշխատաշուկայում հայտնվելուն ու կայուն եկամուտ ունենալուն, որոշ փորձագետներ տեսակետ հայտնեցին, որ իրականում ծրագիրն առանձնապես չի նպաստում դրան:

«Սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտների համար սա մեկանգամյա և կարճաժամկետ միջամտություն է ընդամենը: Կարիք կա հասցեական փաթեթների՝ ներառելով կրթությունը, զբաղվածությունը, առողջապահությունը, բնակարանային հարցերը և այլն»: (փորձագետ)

Փորձագետներից շատերը նշեցին, որ ծրագրի արդյունքների մասին դժվար է դատողություններ անել, քանի որ դրանց վերաբերյալ նեղ ոլորտային կամ լայն գիտական քննարկումներում դրանց գնահատման կամ ծրագրի իրականացման խոչընդոտների ու ձեռքբերումների մասին որևէ բովանդակային քննարկում չեն հիշում: Փորձագետներից մեկի կարծիքով, «եթե այն իրապես ազդեցություն ունենար, կլիներ հանրային արձագանք, կլիներին հաջողված դեպքերի պատմություններ, դրանց վերաբերյալ լուսաբանումներ»:

«Մանկատան սաների համար, ընդհանուր առմանբ, կյանքը բաժանվում է երկու հատվածի՝ կյանքը մանկատան պայմաններում և մանկատնից հետո: Մանկատանն ամեն ինչ հստակ ու կանոնակարգված է, սանը ակնհայտորեն գիտի, թե մանկատանը եղած շրջանում իր ռեսուրսի քանի տոկոսն է օգտագործելու իր կյանքն ու առօրյան կազմակերպելու համար: Ստացվում է, որ մանկատան սանի մոտ ձևավորվում է իր կյանքի կազմակերպման գործընթացին միջամտելու ավտոմատացված մոտեցում՝ կոնկրետ իրավիճակներում հստակ ռեսուրսների օգտագործմամբ: Մանկատնից հետո ընկած ժամանակահատվածը հիմնականում անորոշ է թվում սաներին՝ բացառությամբ երկու կարծրացած ու պատրաստի ուղղության՝ ըստ սեռերի տարաբաշխման՝ տղաները բանակ կամ ոստիկանական ակադեմիա, աղջիկները՝ ամուսնություն կամ այլ անորոշություն: Մանկատան եղած ժամանահակատվածում սանը լայն առումով կիրառելի հստակ գիտելիքներ ու պատկերացում չի ձևավորում ապագայի մասին և կյանքն ինքնուրուն, ինքնաբավ կառուցելու համար: Եթե ծրագիրն իր բովանդակությամբ, հասցեականությամբ և ճկունությամբ կարող է ողջամիտ ժամկետներում լրացնել այս բացը, ուրեմն էապես արդյունավետ կլինի:» (փորձագետ)

Գավառի մանկատան նախկին սաներից մեկը՝ երիտասարդ կինը, լրագրողի հետ հարցազրույցում պատմել է, որ մանկատնից դուրս եկած երիտասարդները դեռևս շարունակում են հայաստանյան հասարակության մեջ խտրականության ենթարկվել՝ «մանկատան անցյալով երիտասարդ կանայք չեն դիտվում ավելին, քան պոտենցիալ սեքս աշխատող, իսկ երիտասարդ տղամարդիկ ընկալվում են որպես պոտենցիալ հանցագործներ: Կամ պետք է լինես գեղեցիկ ու մեկի սիրուհին, կամ էլ պիտի աշխատես մաքրուհի: Մանկատան շրջանավարտների վաթսուն տոկոսը մաքրուհի են աշխատում:» [10] Այսինքն, նրանց խոցելիության և մարգինալացման պատճառներից մեկը երիտասարդ կինը համարում է պիտակավորումն ու խտրականությունն իրենց նկատմամբ: Ինքն անձամբ համաձայնել է

[10] https://iwpr.net/global-voices/armenia-orphans-struggle-overcome-stigma

առաջին իսկ պատահած աշխատանքային առաջարկին իր կյանքում՝ անմիջապես մանկատնից դուրս գալուց հետո: Իր առաջին աշխատանքներից մեկը եղել է բենզալցակայանում մեքենաների ապակիները մաքրելը, ինչի համար նա ստանում էր օրական 3000 դրամ: «Գործատուները գիտեն, որ մենք չունենք որևէ մեկին, ով մեզ կսովորեցնի մեր աշխատանքային իրավունքների մասին կամ կպաշտպանի մեզ դրանց ոտնահարումից», - ասում է նա:[11] Նույն հարցազրույցում անդրադարձ է արվել ՀՕՄ-ի կողմից իրականացված, տվյալ ոլորտում եղած սակավաթիվ հետազոտություններից մեկին, համաձայն որի «միայն 15-ը այն 151 շրջանավարտից, որ 2003-2012թթ. ընթացքում պետական աջակցության շրջանակներում ապահովվել էին բնակարանով, կարողացել էին գտնել կայուն աշխատատեղ, նրանց մի մասը գործազուրկ էին, մյուս մասն էլ ունեին անկայուն զբաղվածություն:» Դա ևս հիմնավորվում է գործատուների շրջանում եղած խտրական դիրքորոշումներով, շեշտելով, որ «հրաժարվում են պաշտոնապես գրանցել որպես աշխատակից, երբ պարզում են, որ նա մանկատան սան է եղել»: [12]

Այս առումով բավականին դիպուկ է փորձագետների այն պնդումը, որ աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի, այդ թվում մանկատան շրջանավարտների համար նախատեսված զբաղվածության պետական ծրագիրը պետք է ապահովի գործատու-շահառու հարաբերություններում աշխատանքային իրավուքների իրացման հնարավորությունները ու որոշակի շարունակական մշտադիտարկում, որպեսզի բացառվի երիտասարդի նկատմամբ խտրականությունը ու երաշխավորվի աշխատատեղի կայունությունը:

Միևնույն ժամանակ, ՀՀ ԱՍՀՆ նախկին փոխնախարարներից մեկի հետ սույն հետազոտության շրջանակներում կայացած զրույցում, կապված խոցելի երիտասարդների զբաղվածությանն ուղղված ծրագրերի ու դրանց արդյունավետության հետ, իր կողմից հնչեց պնդում, որ գործատուների վրա ազդելու որևէ լծակ չունեն նախարարությունում, ինչն անուղղակիորեն վկայում է աշխատաշուկայի հետ թույլ կապի ու ծրագրի գործնականում իրականացման հետ կապված դժվարությունների, մասնավորապես մշտադիտարկման բացակայության կամ շատ դեպքերում անարդյունավետության մասին: Դրա հետ մեկտեղ չկա որևէ հետազոտություն/գնահատում, որը հստակ ցույց կտար այդ ծրագրի արդյունքներն ու արդյունավետության աստիճանը՝ ինչպես պնդում է հետազոտությանը մասնակցած փորձագետներից մեկը: Եվս մի քանի փորձագետ, անդրադառնալով այս հարցին, նշել են, որ իրենք չեն հանդիպել նման հետազոտության, տվյալների կամ քննարկումների որևէ հարթակում:

[11] https://iwpr.net/global-voices/armenia-orphans-struggle-overcome-stigma
[12] Տես նույն տեղում

Մյուս կողմից հետաքրքրական է, որ հետազոտությանը մասնակցած ԶՄԿ-ի ներկայացուցիչը շեշտում էր, որ երիտասարդի զբաղվածությունն ապահովելուց անմիջապես հետո ամիսը մեկ հաճախականությամբ մոտավորապես մեկ-երկու տարի շարունակական մշտադիտարկում է իրականացվում՝ համոզվելու համար, որ դժվարություններ չկան կամ դրանք հաղթայարված են, և երիտասարդն ունի կայուն եկամուտ: Հարց է առաջանում, թե ինչի՞ է հանգեցնում այդ մշտադիտարկումն այն դեպքերում, երբ դժվարությունները հաղթահարված չեն, օրինակ, առկա են լարված հարաբերություններ գործատուի հետ կամ վերջինս ոտնահարում, որևէ կերպ սահմանափակում է երիտասարդ աշխատակցի աշխատանքային իրավունքները, խտրականության ենթարկում և այլն: Դատելով քաղաքականություն մշակողի խոսքից՝ գործատուի վրա ազդելու որևէ լծակ չունի գերատեսչությունը, ի վերջո գործատուն է որոշողը և կարող է հիմնավորել իր որոշումը, օրինակ, երիտասարդին աշխատանքից ազատելու, նրա համար նախատեսված հաստիքը կրճատելու կամ նույն հաստիքով աշխատանքային պայմանները փոփոխելու հետ կապված: Որքանո՞վ է քաղաքականությունն իրագործող կառույցի կողմից իրականացվող այդ մշտադիտարկման գործառույթն արդյունավետ, եթե իրականում աշխատաշուկայում երաշխիքներ չկան, և գործատուն կարող է անտեսանելի խտրականություն դրսևորել կամ կայացնել որոշում ի վնաս ցածր մրցունակություն ունեցող երիտասարդի, բայց ոչ ակնհատորեն ոտնահարելով վերջինիս աշխատանքային իրավունքները: Նման հարցի գոյությունը ևս վկայում է ոլորտում թիրախային խորքային հետազոտությունների պակասի և, հետևաբար, անհրաժեշտության մասին:

Հարցին, թե *ինչու՞ են մանկատան շրջանավարտները զբաղվածության առումով խոցելի ու ցածր մրցունակություն ունեցող համարվում,* փորձագետները պատասխանեցին՝ թվարկելով մի քանի պատճառ: Դրանցից են՝

- հանրության, մասնավորապես գործատուների շրջանում առկա կարծրատիպերն ու խտրական դիրքորոշումները՝ կապված մանկատանը սոցիալականացվելու հետ,
- որակյալ կրթության, հատկապես բարձրագույն կրթության անհասանելիությունը,
- աշխատաշուկայում պահանջարկին չհամապատասխանող կրթություն ունենալը կամ անհրաժեշտ կրթությունը չունենալը,
- մյուս երիտասարդների համեմատ, որպես կանոն, ավելի աղքատիկ սոցիալական ցանց ունենալը,
- մանկատանը սոցիալականացման ընթացքում, հատկապես դեռահասության տարիքում, բռնության տարբեր դրսևրումների ենթարկվելու արդյունքում ցածր ինքնագնահատականի ու թերարժեքության բարդույթի ձևավորումը սաներից շատերի մոտ,

- մանկատանը սոցիալականացվելու ընթացքում կյանքի հմտությունների, մասնավորապես աշխատաշուկայում հաջողելու հետ կապված հիմնարար գիտելիքների ու հմտությունների պակասը,
- անհատականացված մոտեցման պակասը մանկատանը, յուրաքանչյուր սանի ներուժը բացահայտելու հնարավորության բացակայությունը վարվող քաղաքականության, այդ թվում կրթական մոդելի համատեքստում,
- մանկատան շրջանավարտների մոտ իրավագիտակցության ցածր մակարդակը, որը խոցելի է դարձնում նրանց ցանկացած քաղաքացիաիրավական փոխհարաբերություններում,
- մանկատնից դուրս հետագա կյանքին նախապատրաստվելու ծրագրերի ոչ համակարգված բնույթը:

- «Շատ ժամանակ այդ ծրագրերն ու միջոցառումները պայմանավորված են եղել տվյալ պահին առկա պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերով»: (փորձագետ)
- «Մանկատներում դաստիարակության և լայն առումով կրթության քաղաքականությունը եղել է ընդհանրացված և իրական հնարավորություն չի ունեցել անհատական և առանձնահատուկ ազդեցություն ունենալու յուրաքանչյուր սանի վրա: Մասնագիտական առումով վերնշածի պատկերը և արտացոլումը տեսնելու համար կարող ենք դիտարկել, թե մանկատան շրջանավարտների մի քանի սերդունդ (օրինակ 3 սերունդ) ՀՀ աշխատաշուկայում ո՞ր ոլորտներն են զբաղեցերել: Կարծում եմ՝ բավականին մեծ տոկոս կկկազմեն աշխատաշուկայի կոնկրետ նույն ոլորտները: Տվյալ կրթության մոդելը և քաղաքականությունը, որ տևական ժամանակ, տարբեր գործոնների ազդեցությամբ տարվել է մանկատներում, իրական հնարավորություն չի տվել սաներին, որպես ապագա մասնագետ բացահայտելու և զարգացնելու իրենց ներքին ռեսուրսները:» (փորձագետ)

Հարցին, թե ինչպիսի՞ նախապայմաններ են պետք ԱԾԽՄ կարգավիճակ ունեցած մանկատան կամ այլընտրանքային խնամքի համակարգի շրջանավարտների՝ աշխատաշուկայում արդյունավետ գործառնելու համար, բոլոր փորձագետների պատասխանները գրեթե համընկնում էին, շեշտվում էին մրցունակ կրթությունը, ոչ խտրական միջավայրը, արդյունավետ մասնագիտական կողմնորոշումը և պահանջարկ ունեցող մասնագիտություններ ապահովելը:

«Անհրաժեշտ են համալիր թիրախային ծրագրեր, որոնք կապահովեն հասանելիություն որակյալ կրթությանը, բնակության ապահով վայր և ժամանակակից ու պահանջված մասնագիտություն:» (փորձագետ)

Մանկատան շրջանավարների ներառումն աշխատաշուկա խթանելու հնարավոր եղանակների վերաբերյալ փորձագետների զգալի մասը նշել է մենթորության

կարևորությունը, որպեսզի դեռ դպրոցական հասակից նրանց մոտ ձևավորվեն ինքնուրույն կյանքի հմտություններ, առաջնորդության ու որոշումներ կայացնելու հետ կապված կարողություններ: Նրանք նաև շեշտել են շարունակական կրթության զգալի դերը՝ խթանիչ մեխանիզմներ ստեղծելը սաներին բարձրագույն և միջին մասնագիտական հաստատություններ ուղղորդելու առումով:

- «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված աշխատունակ տարիքի աշխատունակ անձանց պարագայում սոցիալական աջակցության հիմնական նպատակը իրավիճակի հաղթահարումը պետք է լինի՝ դրանում հայտնված անձանց ակտիվ գործորդության և համատեղ լուծումներ ձևակերպելու, դրանք իրացնելու ճանապարհով:» (փորձագետ)
- «Կարծում եմ՝ աշխատաշուկայում մանկատան շրջանավարտների լայն ներառում կապահովի հետևյալ մոտեցումը՝ ՀՀ աշխատաշուկայում ուսումնասիրել կամ եղած տվյալների վրա առանձնացնել այն ոլորտները, գործատուներին, որոնք ապահովում են աշխատակցի զարգացումն ու որպես մասնագետ անկախացումը (օրինակ՝ SS ոլորտ), իրավական, հարկային առումներով արտոնություններ տրամադրել, զուգահեռաբար գնահատել մանկատան շրջանավարտների առկա և արագ զարգացող ու աշխատաշուկային պիտանի մասնագիտական ռեսուրսները, այս տվյալների հիման վրա ստեղծել մոտիվացված, փոխշահավետ գործունեության պլատֆորմ՝ պետական ակտիվ ուղղուրդմամբ:» (փորձգետ)
- «Ներառումը խթանելու համար անհրաժեշտ է զբաղվածության խնդիրների լուծման հետ զուգահեռ արհեստավարժ սոցիալ-հոգեբանական վերականգնողական աշխատանքը: Մեկ այլ խնդիր է մանկատան շրջանավարտների բազային գիտելիքի հարցը, ցավոք, մանկատանը գտնվելու շրջանում մանկատան երեխաների կրթության որակը շատ ցածր է, եթե այսօր ընդհանուր կրթության որակն է շատ ցածր, իրենց պարագայում դա ավելի է վատթարանում: Ուստի սոցիալական պաշտպանության և զբաղվածության կառույցները ոչ միայն մասնագիտական կարողությունների և հմտությունների հարցը պետք է լուծեն, այլ զուգահեռ փորձեն փակել առկա բազային գիտելիքների բացը»: (փորձագետ)

Փորձագիտական հարցման շրջանակներում հնչել է *«Ներկայումս ՀՀ ԱՍՀՆ-ը վերսկսել է մանկատան շրջանավարտներին բնակարանային ապահովման ծրագիրը՝ որոշակի փոփոխություններ մտցնելուց հետո: Ըստ Ձեզ, ինչպիսի՞ն է ծրագրի արդյունավետությունը, և ինչպե՞ս այն կարող է ազդել այդ խոցելի խմբի զբաղվածության վրա»* հարցը, որի հետ կապված գրեթե բոլոր փորձագետները շեշտել են, որ այդ ծրագիրը խիստ կարևոր է և կարող է էական ազդեցություն ունենալ մանկատան շրջանավարտների զբաղվածության ու կյանքի որակի ցուցանիշների վրա: Որոշ փորձագետներ նշում էին դեպքերի մասին, երբ երիտասարդը կորցրել է աշխատատեղը կամ հաճախակի փոխել է աշխատավայրը հիմնական կացարան չունենալու պատճառով, իսկ աղջիկների դեպքում դա նաև հանդիսացել է մասնագիտություն ձեռքբերելու և ինքնուրույն եկամուտ ունենալու հեռանկարից զրկվելու պատճառ:

- «Բնակարանային խնդրի լուծումը կարևորագույն սոցիալական երաշխիքն է այս խմբի անձանց համար: Չափազանց ողջունելի է նախարարության այս նախաձեռնությունը: Ես մեկ օրինակ նշեմ իմ աշխատանքային պրակտիկայից: Բազմաթիվ մանկատան շրջանավարտներ, ինչպես նաև հաստատությունների ղեկավարությունը, ձգտել են մանկատնից դուրս գալուց հետո անմիջապես «դասավորել» երիտասարդ աղջիկների ամուսնությունը՝ առաջին հերթին նրանց բնակարանով ապահովելու համար: Դա բախտորոշիչ ազդեցություն է ունեցել այդ աղջիկների կյանքի վրա, հետագա կրթության ընդհատման, աշխատաշուկա դուրս գալու ընտանիքի արգելքի և ինքնադրսևորվելու դժվարությունների տեսքով»: (փորձագետ)

- «Ծրագրի արդյունավետության մասին դեռ վաղ է խոսել, քանի որ դեռևս չկան բավարար տվյալներ, թե արդյոք մանկատան շրջանավարտներին հաջողվել է վկայագրերով բնակարաններ ձեռք բերել, արդյոք դրանք իրենց նախընտրած բնակավայրում են, ինչ խնդիրների են բախվել գնման գործընթացում: Խոսել եմ մի քանի մասնագետի հետ, ովքեր առնչվել են աղետի գոտում վկայագրերով բնակարանների ձեռքբերման գործընթացին, նրանք նշել են բազմաթիվ խնդիրներ, ներառյալ՝ կեղծ գործարքներ, վկայագրերի վաճառք և այլն: Հաշվի առնելով, որ շրջանավարտները բավական խոցելի են, պետք է այս գործընթացն իրականացնել խիստ վերահսկողությամբ»: (փորձագետ)

- «Առաջին հերթին ամեն ինչ պետք է արվի որ նվազեցվի հնարավոր գետտոյացումը և խթանվի մանկատան շրջանավարտների ինտեգրումը հասարակության տարբեր շերտերին: Երկրորդ, բնակարանները պետք է ձեռք բերվեն տնտեսապես քիչ թե շատ ակտիվ համայնքների մերձակայքում: Վերջինը, բնակարանը չպետք է տրվի սեփականության իրավունքով, նախնական կարգավիճակը պետք է լինի սոցիալական բնակարան, որտեղ շրջանավարտն ունի ապրելու անքաքտելի իրավունք, բայց ոչ վաճառելու կամ օտարելու այն: Տարիների ընթացքում, երբ նա կցուցաբերի նպատակասլացություն և կգրանցի հաջողություններ, բնակարանը կարող է դառնալ իր սեփականությունը»: (փորձագետ)

Ներկայումս տվյալ ոլորտում վարվող սոցիալական քաղաքականության հեռանկարների վերաբերյալ փորձագետների տեսլականները գրեթե համընկնում էին: Նրանց գերակշռող մասի կարծիքով, ներկայիս քաղաքականությունը, մասնավորապես բնակարանային ապահովման ծրագիրը և զբաղվածության հիմնահարցի որոշակիորեն հասցեագրումը լավ մեկնարկ են մանկատան շրջանավարտների կյանքում դրական փոփոխություններ առաջացնելու առումով, սակայն, այդուհանդերձ, կան բազմաթիվ բացթողումներ, ուշադրությունից դուրս մնացած ասպեկտներ, մասնավորապես ինչպիսիք են շարունակական գնահատումն ու մոնիթորինգը, մենթորությունը և այլն: Նրանք գտնում են, որ դեռևս առկա է հատվածայնություն և բացակայում է համալիր մոտեցումն առկա հիմնախնդիրներին, ինչը չվերանայելու ու փոփոխություններ չներմուծելու դեպքում զգալի առաջընթաց այս ոլորտում չի արձանագրվի:

- «Ներկայումս խնդիրը կարևոր փուլում է, լավ միտումներ կան, սակայն, ցավոք, ուղեկցող ապրելակերպը չի ներառվել, ինքնուրույն կյանքի պատրաստումը, որպես խնամքի կարևոր բաղադրիչ, գերակա չի ճանաչվել: Նյութական աջակցությունը շատ կարևոր է, բայց պետք է լինի մենթորության և առաջնորդության ծրագիր ևս»: (փորձագետ)
- «Հեռանկարը հասկանալու համար հարկ է դիտարկել այդ քաղաքականության մի քանի օրինաչափություններ, այն է ծրագրի անկեղծությունը՝ թե՛ բովանդակային, թե՛ իրականացման առումով, ճկունությունը և հասցեականությունը:» (փորձագետ)
- «Ցավոք տեղյակ չեմ որևէ ազգային քաղաքականության, որն ուղղված է մանկատան շրջանավարտներին: Ողջունելի է նրանց բնակարանով ապահովելու ծրագիրը, ինչպես նաև հաստատությունների բեռնաթափմանը և խնամքի այլընտրանքային տարբերակների զարգացմանն ուղղված քայլերը: Ընտանիքում ապրող երեխան միշտ լավ կրթություն ստանալու, ինչպես նաև հետագայում լավ աշխատանք ունենալու ավելի բարձր հնարավորություններ է ունենում: Հաստատություններին ֆինանսավորելու փոխարեն պետական ֆինանսական միջոցները պետք է ուղղվեն ընտանիքներին աջակցելու ծրագրերին»: (փորձագետ)

Այդպիսով, փորձագետների կարծիքները համընկնում էին այն տեսանկյունից, որ գրեթե բոլորը շեշտում էին ԱԾԽՄ երեխաներին և հետագայում այդ երիտասարդներին համակարգային, իրավունքահեն, շարունակական և հասցեական աջակցություն տրամադրելու անհրաժեշտությունը, ներկայիս գործող քաղաքականության մեջ փոփոխություններ ու լրացումներ անելու արդիականությունը, ինչպես նաև նպատակային, արդյունավետ մասնագիտական կողմնորոշման ու աշխատաշուկայում առկա խոչընդոտների, այդ թվում պիտակավորման ու խտրականության վերացմանն ուղղված քաղաքականության մշակման կարևորությունը:

Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման պրակտիկայի ու մոտեցումների օրինակներ միջազգային փորձից

Կանադայի կառավարությունը, օրինակ, կարևորում է երիտասարդների զբաղվածության հարցում ներդրումներ անելը: Այս երկրում 19-26 տարեկան երիտասարդներին անվճար առաջարկում են պետական բյուջեից ֆինանսավորվող վեց շաբաթ տևողությամբ ծրագիր ուսումնական հաստատություններում: Այդ ինտենսիվ ծրագիրը թույլ է տալիս բացահայտել այն գիտելիքներն ու հմտությունները, որոնք անհարժեշտ են աշխատաշուկա մուտք գործելու ու դրանում արդյունավետ գործառնելու համար: Դա առավելապես մասնագիտական կողմնորոշման նպատակ ունեցող ծրագիր է, որի շրջանակներում երիտասարդները կարողանում են վերհանել սեփական հետաքրքրությունները, ուժեղ կողմերը և կարիքները՝ կապված հետագա աշխատանքային գործունեության հետ: Իրազեկումը, ուսուցանումը, կողմնորոշումն այդ պետական ծրագրի հիմնական

գործառույթներն են, որոնց միջոցով օգնում են երիտասարդներին հատուկ գիտելիքներ ու հմտություններ ձևավորել և գտնել իրենց համար ավելի նպատակահարմար տեղ աշխատաշուկայում:

Կարևոր է «թեժ գիծ» ծառայության առկայությունը, որով հնարավոր կլինի աջակցել այն բոլոր դեպքերում, երբ երիտասարդները բախվում են արհեստական, չհիմնավորված խոչընդոտների ու խտրականության, ինչպես նաև ցանկացած աշխատանքային իրավունքի ոտնահարման: Այդպիսի ծառայություն արևմտյան շատ երկրների պրակտիկայում, մասնավորապես Կանադայում, գործում է, ինչը հեշտացնում է ուսումնական հաստատությունից երիտասարդների անցումը աշխատաշուկա:

Ռուսաստանի Դաշնությունում, օրինակ, վերջին տասը տարիների ընթացքում ավելի մեծ ուշադրություն են դարձնում դեռահասների մասնագիտական կողմնորոշման հարցին, մասնավորապես «Ռուսաստանի Դաշնությունում կրթության մասին» 29.12.2012-ին ընդունված օրենքի (№ 273-ФЗ) հոդված 66-ի երրորդ կետում նշվում է, որ «միջնակարգ հանրակրթությունն ուղղված է սովորողի անձի ձևավորմանն ու հետագա կայացմանը, սովորելու նկատմամբ հետաքրքրության և ստեղծագործական կարողությունների զարգացմանը, ինքնուրույն ուսումնական գործունեության հմտությունների ձևավորմանը՝ հիմնված միջնակարգ հանրակրթության բովանդակության անհատականացման և **մասնագիտական կողմնորոշման** վրա, սովորողին հասարակությունում հետագա կյանքին պատրաստելուն, սեփական ուղին ինքնուրույն ընտրելուն, կրթությունը շարունակելուն և մասնագիտական գործունեություն մեկնարկելուն»: Այդուհանդերձ, իներցիայով շարունակվում է այն մոտեցումը մասնագիտական կողմնորոշմանը, որն առկա էր դեռևս Խորհրդային Միության տարիներին, մինչդեռ դեռահասների ու երիտասարդների կրթության և զբաղվածության արդիական հարցերին ժամանակակից մոտեցումներ են անհրաժեշտ:

Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման հայաստանյան պրակտիկայի և նրանց զբաղվածության հետ կապված ժամանակակից մոտեցումները

Վերջին ամիսների ընթացքում ՀՀ կառավարությունն այնպիսի փոփոխություններ է նախաձեռնել, որոնց շնորհիվ պետական սեկտորի ուշադրության կիզակետում պետք է հայտնվեն երիտասարդների հիմնահարցերը՝ ներառյալ նրանց զբաղվածության հարցը: ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում հիմնվել է երիտասարդների հիմնահարցերի քննարկման համար նախատեսված ռեսուրս կենտրոն, որի նպատակներից մեկն է հնարավորություն ընձեռնել մեկտեղելու այն երիտասարդներին և նրանց գաղափարները, ովքեր ունեն դժվարություններ, մասնավորապես, զբաղվածության ոլորտում և պատրաստ են քննարկելու դրանք: Այդուհանդերձ, այն չպետք է միայն

սահմանափակվի երիտասարդների հիմնախնդիրներն ու կարիքները վերհանելով, այլև ոլորտային հետազոտությունների, հետաքրքիր բովանդակային քննարկումների, ադվոկացիոն ռազմավարությունների, երիտասարդների վերաբերյալ հանրային քաղաքականության մեջ օրակարգային հարցերում հենց նրանց իսկ մասնակցությունը խթանող հանդիպումների հնարավորություն պետք է դառնա, մասնավորապես իրենց իսկ իրավիճակում դրական փոփոխություններ իրականացնելու վերաբերյալ առաջարկներ ներկայացնելու առումով:

Մյուս կարևոր նախաձեռնությունը, որ բոլորովին վերջերս է մեկնարկել, ՀՀ ԱՍՀՆ կից Երիտասարդների հարցերով խորհրդի ձևավորումն է, որում ներգարվվել են շահագրգիռ կողմեր ու ոլորտի փորձագետներ: Սա ևս երիտասարդների հիմնահարցերին ավելի լավ ծանոթանալու, համատեղ լուծումներ փնտրելու ու տվյալ ոլորտում առավել գործուն սոցիալ-տնտեսական քաղաքականություն մշակելու հնարավորություն կարող է դիտարկվել:

Հայաստանում էական փոփոխություն է նաև ՄԿՈՒ ոլորտում մասնագիտական կողմնորոշման բաղադրիչի ներմուծումը: Օրինակ, ինչպես նշեց ՀՀ «*Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոնի*» ներակայացուցիչը, իրենց կողմից միջին-մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ քոլեջներում, ներդրվել է կարիերայի կառավարման համակարգ, որի արդյունավետությունը հստակ հնարավոր է գնահատել: Իր կարծիքով, նմանատիպ համակարգեր պետք է ներմուծվեն նաև այլ հարթակներ, ուր որևէ կերպ առնչվում են զբաղվածության հետ կապված հարցերին: «*Ի՞նչ կարելի է բարելավել մանկատան սաների համար ներկայումս գործող ծրագրերում՝ առավել հասցեական և շարունակական արդյունքներ ունենալու համար*» հարցին նա պատասխանեց, որ մանկատան սաների համար մասնագիտական կողմնորոշումը պետք է առաջնահերթություններից լինի:

«Առաջին հերթին համակարգային մոտեցում է պետք՝ ունենալ մասնագիտության գիտակցված ընտրության և հարմարման համակարգ, չթողնել ուղղակի մասնագետի հայեցողությանը, թե ինչ աշխատանքներ կտանի շրջանավարտների կամ հենց մանկատան սաների հետ, այլ ունենալ միասնական մեթոդաբանություն, ինչպես որ մենք ներդրել ենք դպրոցում, քոլեջում: Երկրորդը, հաստատությունների միջև կապն է կարևոր: Որքան էլ ասենք, որ մենք այսօր միևնույն նախարարության կազմում ենք աշխատում, մեր միջև կապը շատ թույլ է, այսինքն մենք պետք է կարողանանք իրար հետ աշխատել, մեր գործառույթն անել, փոխանցել մյուս կառույցին, ու կարողանանք փոխշահավետ իրար հետ աշխատել, և ոչ միայն մի հաստատություն մի պետական կառավարման համակարգի ներսում, այլև՝ նախարարությունների, համայնքի և մնացած բոլոր շահագրգիռ կողմերի: Երրորդը գործատուների ակտիվ ներգրավվածությունն է, թեև այդ գործառույթը տրված է ԶՏԿներին, բայց պետք է նաև ունենալ գործատուների ավելի ակտիվ ներգրավվածություն այս հարցում»: (հարցվող՝ մասնագետ պետական կառույցից)

ՀՀ ԱՍՀՆ Զբաղվածության բաժնի մասնագետներից մեկը, ով մասնակցում էր հետազոտությանը որպես հարցվող, նշեց, որ չի տիրապետում այն հարցին, թե ՍԱՏԳ-ներից

ՁՏԿ-ներ ու ՁՄԿ-ներ ուղղորդված անձանց թվում մոտավորապես ո՞ր տոկոսն են կազմում մանկատան շրջանավարտները, և թե ինչ հիմնախնդիրների են նրանք բախվում աշխատաշուկայում: Նրա կարծիքով, այդ հարցերին պետք է պատասխանեն զբաղվածության քաղաքականությունն իրականացնողները և մանկատան սաների հետ անմիջական շփում ունեցողները: Նա նշեց, որ մանկատան սաների համար իրականացվում են ծրագրեր, որտեղ զբաղվածության բաղադրիչը միան մի փոքր ասպեկտն է, և ինքը չի կարող խորությամբ և մանրամասն անդրադառնալ այդ ասպեկտին, քանի որ իրենց բաժինը մշակում է ընդհանուր զբաղվածության քաղաքականությունը, և դրա մի փոքր մասն է վերաբերում մանկատան սաներին՝ որպես անմրցունակ խմբի (ճանաչվել են անմրցունակ խումբ միայն 2019 թվականից): «Այդպիսի խմբերի համար մշակվում է զբաղվածության ընդհանուր քաղաքականություն, որտեղ չկա նեղ մոտեցում մանկատան սաներին», - նշել է մասնագետը:

Մյուս կողմից, զբաղվածության քաղաքականությունն իրականացնող կառույցի ներկայացուցիչը, որպես հարցվող, նշեց, որ իրենք ՁՏԿ-ներում չունեն մանկատան շրջանավարտների նույնականացման մեխանիզմ, որպես այդպիսին: Նրանց այդ կարգավիճակի մասին կառույցի որևէ մասնագետ հարց չի ուղղում երիտասարդներին, լավագույն դեպքում կարող են պատահաբար դեմքով ճանաչել և այդպես պարզել մանկատան շրջանավարտ լինելու փաստը: Մասնավորապես ինքը բազմիցս այցելել է մանկատուն և որոշ նախկին սաների կարող է ճանաչել, եթե նրանք հայտնվեն ՁՄԿ-ում: Միաժամանակ նա նշեց, որ իրենց հաշվետվության պաշտոնական ձևաթղթում նախատեսված է տող մանկատան շրջանավարտների համար, որով պետք է հաշվարկվի նրանց դիմելիության ցուցանիշը, սակայն գործնականում այդ տողում որևէ բան չի նշվում, քանի որ դիմող երիտասարդի կարգավիճակը մանկատան նախկին սան լինելու առումով չի ճշտվում և որևէ տեղ չի լրացվում, պարզապես գրում են, որ չի դիմել որևէ մեկը:

«Գիտեք, հարցը ինչի համար չկա դրված մեր անհատական ծրագրերի մեջ, թե դուք արդյո՞ք մանկատան սան եք, որովհետև իր մեջ նուրբ կողմ ունի, ասենք որ մենք դա դնենք բոլորին ընդհանուր հարցնենք, էս խնդիրը կա: Ուրիշ բան, որ տեղում հասկանանք: Ուղղակի որպես աշխատաշուկայում անմրցունակ անձ դիտարկվում են, ու եթե մենք կասկածենք, որ մանկատնից է, հարցեր կտանք իրենց, բայց էս պահին ում էլ հարցրել ենք, չի ասել որ մանկատան սան է: Ես ճիշտն ասած կասկածում եմ, կարող է չկան էլ նման մարդիկ, չեն դիմում, բայց ես ուղղակի կասկածում եմ, որ չեն հայտնում, որ մանկատան սան են» (հարցվող՝ մասնագետ պետական կառույցից)

Ինչպես ցույց տվեց հետազոտությունը՝ երիտասարդները բավարար իրազեկված չեն այն հնարավորությունների մասին, որոնք ընձեռնվում, առաջարկվում են պետական սեկտորի կողմից: Մասնավորապես հետազոտությանը մասնակցած երիտասարդները, ովքեր ունեցել են ԱԾԽՄԵ կարգավիճակ և խնամվել են ընդհանուր տիպի պետական և ընտանեկան տիպի ոչ պետական մանկատներում, նշում էին, որ աշխատատեղ են փնտրում

փողոցում փակցված հայտարարությունների, առցանց ռեսուրսների (օրինակ www.list.am) կամ իրենց սոցիալական ցանցի միջոցով, երբեք չեն դիմել ԶՏԿ կամ ՍԱՏԳ՝ զբաղվածության պետական ծրագրերից օգտվելու համար: Շատերին զբաղվածության հարցում աջակցել են մանկատների տնօրենները: Նրանք հիմնականում աշխատանքի ձևերի նեղ ցանկ են նշում, այսինքն, մեծ ընտրություն չունեն՝ աշխատում են հիմնականում սպասարկման ոլորտում և հաճախ աշխատավայր փոխում:

Երիտասարդ անմրցունակ ու մասնագիտություն չունեցող մայրերին հասցեագրված զբաղվածության ծրագրի վերաբերյալ ոլորտային քաղաքականությունն իրականացնող կառույցի ներկայացուցիչը նշեց, որ առկա են մի քանի մասնագիտություններ, զբաղվածության ձևեր, որոնք առավել պահանջված են այս երիտասարդների շրջանում:

«Մենք ունենք մայրերի ծրագիր, որտեղ ընդգրկված են մասնագիտություն չունեցող մայրերը, այդ թվում լինում են նաև միայնակ մայրեր; ունենք հատուկ ծրագիր, որ մինչև 6 ամիս է: Օրինակ, եթե մարդը ամուսնացել է, չի հասցրել մի տեղ սովորի, մասնագիտություն չի ստացել, բայց ուզում է մտնել աշխատաշուկա, աշխատանք է փնտրում, մենք օգնում ենք, ու էդ ծրագիրն էլ նոր ծրագիր է: Մարդու նախասիրության համապատասխան գտնում ենք գործատու, գործատուի հետ բանակցում ենք մինչև 6 ամիս ժամկետով, հիմա մենք ունենք 2-3 հատ դեպք ընթացքի մեջ, մարդիկ սովորում են աշխատելով, պրակտիկ գործի մեջ մասնագիտություն են սովորում, վարպետը աշխատում է, իրենք հետը սովորում են, և հետո մենք առաջնահերթություն տալիս ենք էն գործատուներին, ովքեր պատրաստ են հետո պահել աշխատանքի, որովհետև և ունեն թափուր տեղ, եթե չունենան էլ պատրաստակամ են իրենցով հետո էլ զբաղվել, դիմահարդարներ, մատնահարդարներ, շատ են հիմա այդ սալոնները, ուր փորձում ենք տեղավորել երիտասարդ մայրերին»: հարցվող՝ մասնագետ պետական կառույցից)

Մանկատների շրջանավարտներից բաղկացած **ֆոկուս խմբի** մասնակից յոթ երիտասարդները (2 արական սեռի, 5 իգական սեռի) նշում էին, որ կայուն երկարատև աշխատանք երբեք չեն ունեցել, ամենաերկար ժամանակահատվածը, որ հիշատակում էին, երեք տարին էր, բացառությամբ մեկ մասնակցի, ով 4-5 տարի մարզերից մեկում պանրի ցեխում է աշխատել: Լ-ն աշխատել է երեք տարի ոսկու շուկայում որպես մոմագործ, Կ-ն՝ երկու տարի աշխատել է օպերատոր «V construct» ընկերությունում, Վ-ն՝ երկու տարի աշխատել է «Toto Gaming» ընկերությունում, Ա-ն տնական ժամանակ աշխատել է մաքրուհի բնակարաններում և առանձնատներում, Ս-ն մանկատնից անմիջապես հետո աշխատել է հարևանությամբ գտնվող սրճարանում որպես մատուցողուհի, հետո տեղափոխվել է Երևան, Մ-ն՝ երկու տարի աշխատել է հաստոցի օպերատոր բժշկական պարագաների գործարանում, 2 տարի՝ ման լվացող և նույնքան ժամանակ պահեստապետ մանկատանը, իսկ նրա ամուսինը ուղղակի քայլելով փողոցներով, հայտարարություն է փակցնում, հարցուփորձ անում, որպեսզի գտնի այն աշխատանքը, որն ինքը լավագույնս է անում, նա ինքնուս դարբին է, սակայն կատարում է նաև զանազան շինարարական աշխատանքներ:

«Նուրբ գործեր չեմ սիրում, փոքրուց սկսել եմ ոնց որ քարը քարին դնել, ինչ որ մեկը, ասենք, գործ ա ճարել շինարարական, ինձ կանչել ա, գնացել եմ հետը արել եմ, էդ մեծ մարդկանց հետ, ու տենց սովորել եմ: Ամենաշատը երկաթի հետ գործից եմ առնում, ուղղակի որ պատվերով ա, էդ ա վատը, բայց կողքից որ ճանաչում են, զանգում ասում են, գործ կա անելու, օրինակ մեկի տանը հոսանք ա պետք քաշել կամ տենց մի բան»: (ՖԽ մասնակից երիտասարդ)

Աշխատանքից դուրս գալու պատճառների թվում երիտասարդները նշում էին ցածր վարձատրությունը, բնակավայրի հաճախակի փոփոխությունը, հետաքրքրության ու աճելու հնարավորության բացակայությունը, հաստիքի փակվելը, լարվածությունն անձնակազմի հետ շփումներում: Գրեթե բոլորը նշում էին, որ աշխատանք փնտրել, գտել են ինքնուրույն, ոմանց դեպքում՝ սկզբնական շրջանում մանկատան տնօրենի աջակցությամբ: Նրանք շեշտում էին, որ ավելի լավ ու ցանկալի աշխատատեղ գտնելու համար իրենց որոշակի հմտություններ են պակասում՝ մասնավորապես համակարգչային բավարար գիտելիքները և օտար լեզվի իմացությունը: Մասնակիցների կեսն այս պահին փնտրում են աշխատատեղ՝ զուգահեռաբար որոշակի նոր հմտություններ ու գիտելիքներ ձևավորելուն ուղղված քայլեր նախաձեռնելով: Մասնավորապես Վ-ն սկսել է հաշվապահության դասընթացների մասնակցել, երկու հոգի՝ անգլերեն պարապել, իսկ Լ-ն նշեց, որ ծրագրավորման առաջին դասն է ունեցել այդ օրը: Չորս մասնակցի դեպքում դեր է խաղացել նաև ներկայիս համավարակով պայմանավորված արտակարգ իրավիճակը, որից անմիջապես առաջ աշխատանքից դուրս են եկել նորը գտնելու ակնկալիքով, բայց առ այսօր էլ չեն կարողացել հասնել այդ նպատակին: Համավարակով պայմանավորված իրավիճակը ազդել է, օրինակ, դարբնի աշխատանք իրականացնող երիտասարդի զբաղվածության վրա՝ այս պահին չունի պատվերներ: Երիտասարդներից մեկը նշեց, որ արտակարգ իրավիճակից առաջ ուներ պլանավորած ուղևորություն Եվրոպա, ուր իր քրոջ միջնորդությամբ աշխատանք էին առաջարկել, սակայն դա էլ տեղի չունեցավ, և հիմա անորոշ վիճակում է: Միաժամանակ նա տեսակետ հայտնեց, որ աշխատաշուկայում ամեն բան այդքան վատ չէ, պարզապես նախաձեռնող ու ակտիվ է պետք լինել, փնտրել է պետք ու վստահել սեփական ուժերին: Երիտասարդները նշում էին նաև կայուն զբաղվածության ու կացարանային հարցերի միջև ուղղակի կապի մասին, հիմնավորելով այն նրանով, որ «վարձով ապրելը դժվար է», նաև հաճախակի են ստիպված լինում հասցե փոխել, ոմանց դեպքում դա մարզից մարզ կամ գյուղից/քաղաքից քաղաք տեղափոխվելու հետ է կապված եղել, երբ նույն

եկամուտն այլևս չի բավարարել կամ աշխատավայրը բնակավայրից հեռու է գտնվել, կամ էլ պարզապես կորցրել են ունեցած աշխատատեղը: Սա կրկին անգամ հիմնավորում է նաև փորձագետների հնչեցրած տեսակետն այն մասին, որ ներկայումս վարվող սոցիալական քաղաքականությունը և մանկատան շրջանավարտներին բնակարանով ապահովելու ծրագիրը անկյունաքարային նշանակություն ունեն նրանց կյանքի մյուս ասպեկտներում, մասնավորապես զբաղվածության հարցում դրական փոփոխությունների հասնելու առումով:

Զբաղվածության պետական ծրագրերի, մասնավորապես անմրցունակ երիտասարդ մայրերի համար նախատեսված ծրագրի մասին հարցին երիտասարդները պատասխանեցին, որ երբևէ չեն օգտվել, քանի որ չեն էլ լսել դրանց մասին, պարզապես երբ անհրաժեշտ է եղել, կարողացել են փնտրել և գտնել աշխատանք ինքնուրույն, իրենց ընկերների կամ մանկատան անձնակազմի աջակցությամբ: «Եթե աշխատանք գտնելու կամ որևէ հմտություն զարգացնելու կարիք եմ ունեցել, պարապել եմ մասնավոր հիմունքներով», - ասում է Կ-ն: Մ-ի խոսքերով իրեն օգնում է իր ինքնավստահությունը և ճարպկությունը, ինչպես նաև նորն արագ սովորելու կարողությունը՝ «օրինակ էս անգամ տենց եմ արել, մտել եմ խանութ, հարցրել եմ, գրված է վաճառողուհի, մի քիչ, մի քիչ չէ, լավ էլ շուստրի եմ բնավորությունով, շուտ եմ սովորում, վստահ եմ իմ ուժերի վրա, դրա համար մտնում եմ, խոսում եմ, խոսացնում, անպայման որ ամեն ինչի մեջ լինեմ, իմանամ»:

Երիտասարդների հետ ֆոկուս-խմբային քննարկման գործիքում նախատեսված է եղել «Եթե Ձեզ կարճ ժամանակով նշանակեին նախարար ՀՀ ԱՍՀՆ-ում, առաջին հերթին ինչպիսի՞ փոփոխություններ կիրականացնեիք երիտասարդների, մասնավորապես մանկատան շրջանավարտների զբաղվածության ոլորտում» հարցը, որին մասնակիցները միաձայն պատասխանել են, որ առաջին հերթին փոփոխություն կներմուծեին աշխատաշուկա, որով համատարած պարտադիր չէր լինի աշխատանքային փորձը, և երիտասարդները հնարավորություն կունենային զբաղեցնելու իրենց գիտելիքներին, մասնագիտություններին համապատասխանող աշխատատեղերը: Միաժամանակ նրանք կարևորեցին կամավորական աշխատանքը և մասնագիտական պրակտիկան, քաղաքականությունում որոշում կայացնողի կարգավիճակ ունենալու դեպքում կխթանեին կամավորականությունը, որի համար

երիտասարդներին խրախուսանքի ձևեր կմշակեին, սակայն սա դեռևս այդքան էլ կիրառելի չի մանկատան շրջանավարտների պարագայում, քանի որ մանկատնից դուրս գալուց հետո, հայտնվելով միայնակ սեփական հիմնախնդիրների՝ առաջին հերթին ապահով կացարան ու կենցաղ ստեղծելու հետ, հաճախ կարիք են ունենում անմիջապես ներառվելու աշխատաշուկա, որպեսզի ունենան սեփական եկամուտը և կարողանան բավարարել իրենց նվազագույն պահանջմունքները, արդյունքում նրանք հաճախ համաձայնում են ցանկացած աշխատանքի: Այդպիսով, աշխատանքային փորձ կուտակելու և հմտություններ ձևավորելու նպատակով կամավորականությունը նրանց համար դեռևս գործող լուծում չէ:

«Առաջին հերթին, որ սովորում ես, ուզում ես աշխատել, բայց միանգամից փորձ են ուզում գործատուները: Պետք ա մի տեղ աշխատես, չէ՞, որ փորձ ունենաս: Ուրեմն երիտասարդներին ավելի շատ պրակտիկայի հնարավորություն պիտի տրվի: Օրինակ, ժողը էդ հնարավորությունը տալիս էր, բայց ԵՊՀ կիրառականում տենց բան չկա, որ լավ գիտելիքներ ունենաս էլ փորձը կապ չունի, բայց փորձի հետ էլ ես գիտելիքներ ձեռք բերում, հետո պրոյեկտների վրա ես արդեն աշխատում: Երբ միանգամից գործատուները 3+ տարվա փորձ են ուզում, ոչ մեկ ստավկեն չի դնում ջունիորների վրա»: (ՖԽ մասնակից երիտասարդ)

ՖԽ մասնակից երիտասարդների տարիքը տատանվել է 26-36 տարեկան միջակայքում: Ներկա պահին փաստացի նրանցից չորսը չունեն զբաղվածություն՝ մասնավորապես պայմանավորելով այդ իրավիճակը համավարակով:

Անդրադառնալով մասնագիտական գիտելիքների ու աշխատաշուկայում պահանջարկ ունեցող համընդհանուր հմտությունների ինքնագնահատման արդյունքներին՝ երիտասարդները բարձր են գնահատել հայերեն լեզվի իրենց իմացությունը, անգլերեն լեզվի իմացությունը մասնակիցների գերակշռող մասը գնահատել է միջին, մեկ հոգի՝ բարձր և ևս մեկ հոգի՝ ցածր, համակարգչային գիտելիքներն ու հմտությունները ծրագրավորողի մասնագիտություն ունեցող երիտասարդը գնահատել է տասից ութ, մյուսները՝ յոթ, մեկ հոգի գնահատել է բավականին ցածր: Սեփական մասնագիտական կարողությունները մեկ մասնակից գնահատել է ամենացածր՝ 1 թվով, մյուսները նշել են 4 և 5 թվերը 10 բալանոց սանդղակում, ևս մեկ մասնակից մանրամասնել է, որ շատ ցածր է գնահատում իր գիտելիքներն ու հմտություններն այն մասնագիտությամբ (իրավաբան), որն ստացել է, սակայն նշել է սանդղակում 9 թիվը՝ վերագրելով այն իր օպերատորական աշխատանքին, որն իրականացրել է վերջին շրջանում: Աշխատանքային ուղու

տևողության մասին մասնակիցները պատասխանել են, որ գրեթե միշտ աշխատել են, բայց հինականում ունեցել են ոչ կայուն ու հաճախ ոչ պաշտոնապես գրանցված աշխատանք: Այս պահին չաշխատող երիտասարդներից մեկն ունեցել է 6 տարվա աշխատանքային փորձ, սակայն միայն երկու տարին է եղել կայուն մեկ կազմակերպությունում: Մյուսը նշել է, որ ունի 10 տարվա աշխատանքային փորձ և ներկայումս աշխատում է որպես գանձապահ, ընդ որում տնտեսագետի մասնագիտությամբ, որն ստացել էր ԲՈՒՀում, իրեն բոլորովին կոմպետենտ չէր համարում և մասնագիտական կարողությունները գնահատում էր շատ ցածր: Մեկ այլ մասնակից ուներ 12 տարվա աշխատանքային փորձ, բայց ներկայումս գործազուրկ էր, փորձում էր նոր մասնագիտություն (հաշվապահ) ձեռք բերել: Եվս մեկ մասնակից նշում էր, որ մանկատնից դուրս գալուց առ այսօր աշխատել է՝ մոտավորապես 11 տարի, որից առաջին մոտ հինգ տարին գրանցված աշխատանք չի եղել, աշխատել է պանրի արտադրամասում մարզերից մեկում: Մյուս մասնակիցներն ունեցել հաճախ ընդհատվող, անկայուն աշխատանքային ուղի՝ հիմնականում չգրանցված հաստիքներում:

Մանկատան շրջանավարտ լինելու հանգամանքով պայմանավորված խտրականությունից բացի, աշխատաշուկայում խտրականության ևս մեկ դրևորման՝ էյջիզմին են բախվել հետազոտությանը մասնակցած երիտասարներից մի քանիսը՝ նշելով, որ 30 տարեկանից հետո ավելի է դժվարանում աշխատաշուկայում ներառվելը:

«Վաճառողուհու տեղի համար էի զանգել, հարցրեցին, քանի տարեկան եմ, ասեցի՝ 35, ասեցին «Քուրիկ ջան, ըտեղ գրած ա մինչև 30, խի՞ ես զանգել»; սենց կոպիտ, ես էլ անջատել եմ, մի քիչ լացել եմ, բայց ջղայնությունից ասել եմ մի հատ վայբերով պետք ա գրեմ, մեկ ա չգիտեն, որ ես եմ խոսացել: Վայբերով էդ համարին գրել եմ, վռազ համաձայնել ա: Վայբերով նկարս տեսել, համաձայնել ա, այսինքնս ըտեղ տեսքնա էլի կարևոր: Հիմա սաղ գրում են, որ փնտրում են բարետես աշխատող, զանգում ես, հեռախոսով տեսքդ չեն տեսնում, ասում ես 35 տարեկան ես, ասում են ոչ, բայց հենց նկարդ տենում են, կանչում են, նշանակում ա տեսքդ տեսավ համաձայնեց:» (ՖԽ մասնակից երիտասարդ)

Այդպիսով, երիտասարդների հետ ֆոկուս խմբային քննարկումը հաստատեց այն վարկածը, որ մանկատան շրջանավարտները, հատկապես երիտասարդ մայրերը, հանդիպում են բազմաթիվ խոչընդոտների աշխատաշուկայում, դժվարանում են գտնել կայուն եկամուտ ապահովող գրանցված աշխատատեղ, ու թեև նրանց զգալի մասն ունի միջին-մասնագիտական կամ բարձրագույն կրթություն, այդուհանդերձ իրենց մասնագիտությամբ գրեթե ոչ մեկը չի աշխատում, ավելին, իրենք իրենց մասնագիտական

կարողությունները բավականին ցածր են գնահատում և խոստովանում են, որ ունեն մի շարք հմտությունների ձևավորման կարիք, որպեսզի կարողանան առավել հաջող դրսևորվել աշխատաշուկայում: Դրա պատճառները վերհանելու համար անհրաժեշտ է մեկ այլ հետազոտություն, որի վարկածը կարող է լինել այն, որ հաճախ նրանք ստացած կրթությունը չեն արժևորում, հեշտությամբ են հայտնվում ուսումնական հաստատություններում ու հեշտությամբ էլ ավարտում դրանք, բայց ոչ այնքան բարձր առաջադիմության ու ակտիվ ուսանողական կյանքի արդյունքում, որքան միջնորդությունների շնորհիվ և այդ հաստատություններում առկա կարծրատիպային վերաբերմունքի, այսպես կոչված «դրական խտրականության» պատճառով, երբ գնահատականը հեշտությամբ է շնորհվում ու չի խրախուսվում սովորելու ձգտումը: Պատճառներից մեկը կարող է լինել նաև մասնագիտական կողմնորոշման բացակայությունը կամ անարդյունավետությունը, երբ մանկատան սանը գրեթե չի մասնակցում իր իսկ կրթական ուղու և մասնագիտության ընտրությանը, հայտնվում է այս կամ այն կրթական միջավայրում պատահականորեն՝ մանկատան տնօրինության կամ այլ մեծահասակների որոշումով ու աջակցությամբ: Հարկ է նշել, որ սրանք պնդումներ չեն, այլ վարկածներ, որոնք ստուգելու համար լրացուցիչ հետազոտություն է անհրաժեշտ իրականացնել:

Եզրակացություն

Երկար տարիներ խորհրդային և անգամ հետխորհրդային Հայաստանում ԱԾԽՄԵ կարգավիճակ ունեցող անձինք ստացել են ունիֆիկացված, հաճախ ոչ հասցեական ծառայություններ, հիմնականում փակ ռեզիդենցիալ հաստատություններում, ուր բորոր գործընթացները եղել են ինստիտուցիոնալացված՝ պերմանենտ, միանման, անհատական մոտեցման ու ճկունության հնարավորությունը բացառող կամ խիստ նվազեցնող: Արդյունքում, ենթարկվելով հասարակության մեջ առկա բազմաթիվ ռիսկի գործոնների բացասական ազդեցությանը, նրանք դառնում էին խոցելի, պիտակավորվում և հասարակության գործառնման տարբեր ոլորտներից դուրս մղվում՝ հաճախ համալրելով մարգինալացված անհատների շարքերը: Հասարակական ընկալումներում այդպիսի անհատները հաճախ որևէ հեռանկար չեն ունենում, բացի ցածր իմիջ ունեցող աշխատանքի ձևերում ներառվելուց կամ դեվիանտ վարք ունեցող ու հանցագործ դառնալուց: Այդպիսի խեղաթյուրված պատկերացումները նման երիտասարդների մասին, մի կողմից, և անարդյունավետ, ոչ հասցեական սոցիալական քաղաքականությունը մյուս կողմից, հանգեցրել են նրան, որ Հայաստանում ցածր մրցունակություն ունեցող կամ անմրցունակ, գործազուրկ և խոցելի երիտասարդների շարքերում զգալի թիվ են կազմել մանկատան շրջանավարտները:

Տվյալ հետազոտության շրջանակներում ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հասցեագրված պաշտոնական հարցման արդյունքում պարզվել է, որ 2000-2020թթ. ընթացքում Հայաստանում ընդհանուր տիպի պետական մանկատան շրջանավարտ է դարձել 205 երիտասարդ: Հարցումն իրականացվել է այն հանգամանքից ելնելով, որ մանկատան շրջանավարտների վերաբերյալ որևէ լիարժեք ու հասանելի պաշտոնական վիճակագրություն ՀՀ-ում չկա: Մինչդեռ կարևոր է հասկանալ, թե ինչպիսի թիրախ խմբի, ինչպիսի հիմնախնդիրների ու կարիքների, խոցելիության ինչպիսի աստիճանի ու դրսևորումների հետ գործ ունի տվյալ ոլորտում քաղաքականություն մշակողը, ում է հասցեագրված ներկայիս կամ առաջիկայում նախատեսվող աջակցությունը՝ ներառյալ զբաղվածության հիմնահարցի հետ կապված: Հարկ է նշել, որ որևէ հատուկ մշակված զբաղվածության պետական ծրագիր, որն ուղղված կլիներ միայն մանկատան շրջանավարտներին, դեռևս գոյություն չունի: Ներկայիս բազմաթիվ պետական ծրագրերի շրջանակներում այս խոցելի խմբին ուղղված առանձին ծրագիր չկա, բայց կան դրանցում ընդգրկվելու համար որոշակի հիմքեր՝ նախատեսված որոշ ծրագրերի բաղադրիչներում: Մասնավորապես, «Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման

կազմակերպում» ծրագրում ընդգրկվելու առաջնահերթություններից է այն անմրցունակ անձը, ով բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության (մանկատան) շրջանավարտ է հանդիսանում: Այս ծրագրից բացի, 2019 թվականից սկսած (նույն թվականին մանկատան շրջանավարտները ճանաչվեցին աշխատաշուկայում անմրցունակ խումբ) վերանայվել ու վերսկսվել է 2003-2013թթ. ընթացքում ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացված «Պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագիրը, որը հիմնականում ուղղված է բնակարանային ապահովման հարցին, սակայն որոշ դեպքերում առաջարկվում է նաև մասնագիտական կողմնորոշման և զբաղվածության առումով աջակցություն: Օրինակ, ներկայումս այս երիտասարդներին ՀՀ ԱՍՀՆ կողմից տրամադրվող սերտիֆիկատները հնարավորություն են տալիս գնելու մեկ սենյականոց բնակարան Երևանում կամ սեփական ոչ մեծ տուն մարզերում, ընդ որում վերջինիս դեպքում առաջարկվում է մասնագիտական վերապատրաստում աշխատատեղ գտնելու նպատակով և մինչև 1000000 դրամի աջակցություն փոքր բիզնես սկսելու համար: Այդուհանդերձ, վերոնշյալ տարիներին առաջարկվող աջակցության արդյունավետությունը դեռևս որևէ կերպ ապացուցված չէ, չկան հստակ հետազոտական տվյալներ, որոնք կհիմնավորեին այս թիրախ խմբի համար զբաղվածության առանձին պետական ծրագիր մշակելու անհրաժեշտության բացակայությունը: Ավելին, տվյալ ոլորտի փորձագետներից ոմանք նշում են, որ, օրինակ, երիտասարդ անմրցունակ մայրերի համար գործող ծրագրի արդյունքների մասին դժվար է դատողություններ անել, քանի որ դրանց վերաբերյալ նեղ ոլորտային կամ լայն գիտական քննարկումներում այդ արդյունքներին անդրադարձ չի լինում, չեն քննարկվում այս առումով ձեռքբերումներն ու խոչընդոտները, չեն ներկայացվում հետազոտությունների կամ վերլուծության արդյունքներ, որոնք թույլ կտային պնդել, որ եղած ծրագրերով հաջողվում է լուծել երիտասարդների այս խմբի զբաղվածության հիմնահարցը:

Այսպիսով, ինչպես վկայում են հետազոտության շրջանակներում ուսումնասիրված աղբյուրները, իրականացված հարցումների և երիտասարդների հետ ֆոկուս խմբային քննարկման արդյունքները՝ մանկատան շրջանավարտները հիմնականում դժվարություններ են ունենում աշխատատեղ փնտրելու, գտնելու, այսինքն, աշխատանքային դիմումն ու ինքնակենսագրականը գրագետ գրելու, հարցազրույցին պատշաճ ներկայանալու և այն հաղթահարելու, աշխատատեղը զբաղեցնելու և պահպանելու, աշխատակազմում թիմային հարաբերություններում հաջողելու առումով: Դա պայմանավորված է մի քանի գործոններով.

- ցածր մրցունակություն,
- ցածր իրազեկվածություն,

- անհրաժեշտ հմտությունների պակաս,
- խտրականության տարբեր դրսևորումների առկայություն,
- առաջարկվող զբաղվածության ձևերի սահմանափակ ընտրություն:

Խիստ կարևոր է ԱԾԽՄ երեխաների կյանքի հատկապես այն հմտությունները զարգացնելը, որոնք անհրաժեշտ են աշխատաշուկայում առավել արդյունավետ գործառնելու, կողմնորոշվելու, աշխատատեղ փնտրելու, գտնելու և պահպանելու, այդպիսով, առավել մրցունակ լինելու համար, ինչն իր հերթին կունենա շարունակական դրական ազդեցություն նրանց հետագա ինքնուրույն կյանքի վրա: Դա կարող է նպաստել նրանց իրավագիտակցության և մոտիվացիայի բարձրացմանը, ինչպես նաև խթանել հավասար հնարավորություններ՝ կանխարգելելով անհանդուրժողականության և խտրականության դրսևրումները աշխատաշուկայում և, առհասարակ, հասարակությունում:

Այն պետությունը, որն իր սոցիալ-տնտեսական քաղաքականության մեջ առաջնահերթություն չի դիտարկում երեխաների ու երիտասարդների մասին հոգածությունը, նրանց իրավունքների իրացման համար հավասար պայմաններ ստեղծելը, գործուն ու հեռանկարային երիտասարդական ռազմավարություններ, քաղաքականություն մշակելը, դատապարտված է ձախողման և ապագա չունի: Անհրաժեշտ են համակարգված համատեղ ջանքեր, միջգերատեսչական ու միջկազմակերպական արդյունավետ համագործակցության ուղղությամբ քայլեր, իրավունքահեն և հասցեական ծրագրեր ու ծառայություններ հատկապես այն երիտասարդներին, ովքեր, ենթարկվելով ռիսկի տարբեր գործոնների ազդեցությանը, հանդիսանում են խոցելի և ցածր մրցունակություն ունեցող կամ անմրցունակ: Հավասար պայմաններով նրանց ներառումը հասարակական կյանքի տարբեր ոլորտներ, ներառյալ կրթություն և աշխատաշուկա, կնպաստի ոչ միայն նրանց կյանքի որակի բարձրացմանը, այլև, որոշակի առումով, հասարակության և պետության զարգացմանը:

Հետազոտության արդյունքների հիման վրա ձևավորված առաջարկությունները

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, այդ թվում Ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների վարչությանը, Աշխատանքի և զբաղվածության վարչությանը, դրա ենթակայության տակ գտնվող պետական կառույցներին

1. Ակտիվացնել միջգերատեսչական և միջկազմակերպական համագործակցությունը, մասնավորապես հստակեցնել ՀՀ ԱՍՀՆ ենթակայության տակ գտվող «Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոնի» գործառույթները և համագործակցության շրջանակները, նախաձեռնել և ֆինանսավորել արդիական ու պահանջված ծրագրեր՝ կապված երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և աշխատաշուկային պատրաստելու հետ:

2. Ուսումնասիրել աշխատաշուկայի պահանջները, համագործակցել ոչ միայն պետական զբաղվածության տարածքային ու մարզային կենտրոնների, այլև մասնավոր կազմակերպությունների հետ, որոնք սոցիալական պատասխանատվության ծրագրերի շրջանակներում կարող են աջակցել մանկատների ավագ տարիքի երեխաներին՝ ժամանակակից, առավել պահանջարկ ունեցող մասնագիտություններ ձեռք բերելու առումով:

3. 16-23 տարեկան երիտասարդների շրջանում ներդնել ինքնուրույն ապրելակերպի մոդելը, ընդհանուր տիպի մանկատներում և այլընտրանքային խնամքի կենտրոններում նախաձեռնել առաջնորդության ու մենթորության ծրագրեր: Ընդ որում մենթոր-առաջնորդներ կարող են լինել հանրային մարդիկ տարբեր ասպարեզներից, այլ երիտասարդներ, ովքեր հասել են հաջողությունների և հավասարը-հավասարին ուսուցման սկզբունքով (peer education) կառաջնորդեն ցածր մրցունակություն ունեցող երիտասարդներին, այսինքն պետական սեկտորը, իր սոցիալական ռեսուրսն ու կապիտալն օգտագործելով, կխրախուսի ներառական մոտեցում և երկխոսություն տարբեր սոցիալական խմբերի միջև:

Մանկատան շրջանավարտների համար օգտակար և արդյունավետ կարող է լինել մենթորության ծրագիրը, երբ հմուտ մենթորը (անկախ տարիքից) կարողանա անհատական մոտեցում ցուցաբերել և բավարար ժամանակ տրամադրել իր մենթորության ներքո գտնվող մանկատան շրջանավարտին՝ անհրաժեշտ խորհուրդները տալու, ուղղորդելու, երիտասարդի ռեսուրսները, կարիքներն ու նախասիրությունները բացահայտելու, դրանք արդյունավետ հասցեագրելու համար։

4. Աջակցել խոցելի կենսաբանական ընտանիքներին, կանխարգելելով մանկալքությունը, զարգացնել ու կայացնել խնամատար ընտանիքի ինստիտուտը և երեխաների աջակցության համայնքահեն ծառայությունների համակարգը ՀՀ-ում։ Մեծածավալ իրազեկման աշխատանքներ իրականացնել, որպեսզի համայքներն ուշադրության կենտրոնում պահեն խոցելի ընտանիքներին և ժամանակին արձագանքեն նրանց կարիքներին։ Այդ առումով առավելապես կարևոր է համայնքներում սոցիալական աշխատողների ակտիվ ու պրոֆեսիոնալ մասնագիտական գործունեությունը։

   Անհրաժեշտ է շարունակել և լրամշակել հաստատությունների բեռնաթափման քաղաքականությունը՝ համադրելով այն դեպի խնամքի հաստատություններ երեխաների մուտքը կանխարգելող ծրագրերի իրականացման հետ։ Հաստատություններին ֆինանսավորելու փոխարեն պետական ֆինանսական միջոցները պետք է ուղղվեն ընտանիքներին աջակցելու ծրագրերին և ապակենտրոն, համայնքահեն խնամքի ձևերին։

5. Երաշխավորել և ապահովել մանկատան շրջանավարտների համար հասանելիությունը հանրային ռեսուրսներին ու ցանցերին՝ ներառյալ տարբեր մասնագիտական հանրույթներին։

6. Ապահովել ու տրամադրել համապարփակ գիտելիքներ և տեղեկատվություն արդի աշխատաշուկայի վերաբերյալ. զբաղվածությանը միտված ծրագրերը պետք է հնարավորինս լայնորեն լուսաբանվեն՝ հատկապես երիտասարդության շրջանակներում։

7. Տրամադրել պետական հոգածություն՝ հասցեական աջակցություն խոցելի երիտասարդներին, մասնագիտության ձեռք բերման կամ վերապատրաստման ընթացքում սոցիալական պաշտպանության երաշխիքներ ապահովելով։
8. Ապահովել արհեստավարժ սոցիալ-հոգեբանական խորհրդատվություն և նմանատիպ աջակցություն ստանալու հնարավորություն մանկատան սաների համար։
9. Ապահովել «վստահության հեռախոս» կամ «թեժ գիծ» ծառայություն հատուկ երիտասարդների համար, որով հնարավոր կլինի աջակցել նրանց և արագ արձագանքել, երբ բախվում են խոչընդոտների ու աշխատանքային իրավունքի ոտնահարման, ինչպես նաև խտրականության տարբեր դրսևորումների։

ՀՀ ԿԳՄՄԵ նախարարությանը

10. Կրթության բոլոր մակարդակներում՝ հանրակրթությունում, ՄԿՈՒ ոլորտում և ԲՈՒՀ-ում, ապահովել բազմազանությունն ու ներառականությունը՝ բացառելով խտրականության որևէ դրսևորում ԱԾԽՄԵ կարգավիճակ ունեցող/ունեցած անհատների նկատմամբ։

11. Մանկատան սաներին ու շրջանավարտներին ապահովել հավասար պայմաններով ու մրցունակ կրթությունով՝ առանց նրանց համար խոչընդոտերի կամ չհիմնավորված արտոնությունների (մանկատան շրջանավարտը չպետք է դրական գնահատական ստանա, որպես նրա նկատմամբ նախապաշարմունքների ու խղճահարության արդյունք, այլ պետք է ունենա հնարավորություն հավասարապես մասնակցելու կրթական միջավայրի բոլոր գործընթացներում)։ Տրամադրել բազային ակադեմիական գիտելիքներ, ձևավորել 21-րդ դարի պահանջներին համապատասխանող հմտություններ։

12. Միջին-մասնագիտական ու բարձրագույն ուսումնական հաստատություններում մշակել և ներառել պրակտիկայի այնպիսի ծրագրեր, որոնցով անցած երիտասարդների, մասնավորապես խոցելի խմբերի ներկայացուցիչների համար, դա կդիտարկվի որպես աշխատանքային փորձ և կնպաստի աշխատաշուկայում առավել հեշտ ներառվելուն։

13. Թատրոններում և մշակութային այլ օջախներում նախաձեռնել կամ աջակցել այն նախաձեռնություններին, որոնք որևէ կերպ (թատրոնի դասական կամ ժամանակակից ներկայացում, պարարվեստ, երգարվեստ կամ այլ) լուսաբանում են մանկալքության, կենսաբանական ընտանիքից դուրս խնամվելու և սոցիալականացվելու հիմնահարցը՝ նպաստելով ԱԾԽՄ կարգավիճակ ունեցած մանկատան կամ այլընտրանքային խնամքի համակարգի սաների ու շրջանավարտների նկատմամբ խտրականության նվազմանը:

ՀՀ ընդհանուր տիպի պետական մանկատների ղեկավարությանը

14. Լինել նախաձեռնող և կայացնել համագործակցություն պետական ու ոչ պետական այն կազմակերպությունների հետ, որոնք կարող են գործուն մասնակցություն ունենալ մանկատան շրջանավարտների աշխատանքային զբաղվածությունն ապահովելու գործում՝ չսպասելով, որ որևէ կազմակերպություն իր նախաձեռնությամբ կանի համագործակցության առաջարկ:
15. Զարգացնել մանկատան սաների կյանքի հմտությունները, մասնավորապես աշխատանքի փնտրման, տեղավորման և պահպանման հետ կապված, և հզորացնել մասնագիտական կողմնորոշմանն առնչվող ծրագրերը դեռևս մանկատնից: Կարևոր է մասնագիտական կողմնորոշումը վաղ տարիքում, որպեսզի երիտասարդների մոտ կայուն պատկերացումներ լինեն աշխատաշուկայում պահանջարկի և առաջարկի վերաբերյալ, ինչպես նաև սեփական ներուժի ու կարողությունների վերաբերյալ:
16. Հետևողականորեն բարձրացնել մանկատան սաների իրավագիտակցության մակարդակը, պատրաստել ինքնուրույն, սեփական իրավունքներին իրազեկ և դրանք պաշտպանելու ունակ շրջանավարտներ:

Տեղական զանգվածային լրատվամիջոցներին և ոլորտում գործող ՀԿ-ներին

17. ԶԼՄ-ների հետ համագործակցության ռազմավարություն մշակել և իրականացնել, մասնավորապես տվյալ որորտում օբյեկտիվ ու հավաստի տեղեկատվություն լուսաբանելու առումով լրագրողների իրազեկվածության ու պրոֆեսիոնալիզմի բարձրացմանն ուղղված կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով; ԶԼՄ-ների հետ համատեղ պատրաստել և իրագործել տեղեկատվական կամպանիաներ, սոցիալական գովազդներ ու հաղորդումներ՝ կապված պիտակավորման,

խտրականության, հանդուրժողականության, քաղաքացիական հասարակության գաղափարների/արժեքների, իրավահավասարության հարցերի, ինչպես նաև ԱԾԽՄԵ կարգավիճակ ունեցող անհատների մասին կարծրատիպերի վերաբերյալ, իրականացնել դրանց վերացմանն ուղղված քայլեր մեդիադաշտում:

18. Նախաձեռնել հաղորդումներ, տեղեկատվական հարթակներ, ուր կքննարկվեն ներկայիս երիտասարդության հիմնախնդիրները, մասնավորապես աշխատաշուկայում, կհանրայնացվեն զբաղվածության ոլորտում գործող պետական ծրագրերը և դրանցից օգտվելու պայմանները, կներկայացվեն հաջողված դեպքերը, մասնավորապես ցածր մրցունակություն ունեցող երիտասարդների ու գործատուների հաջողված համագործակցության օրինակները և դրանց արդյունքները:

Այնուամենայնիվ, գերագույն դերը վերոնշյալ փոփոխություններում ու առաջարկությունների իրագործման հարցում պետք է ստանձնի ՀՀ կառավարությունը, քանի որ այն պետք է առաջինը շահագրգռված լինի հասարակական համերաշխության, հանդուրժողականության զարգացման, հասարակության անդամների արտամղումը, խտրականության տարբեր դրևորումները բացառելու ու կայացած ժողովրդավարությամբ հասարակություն և սոցիալական պետություն կառուցելու մեջ:

Օգտագործված գրականության և առցանց աղբյուրների ցանկ

1. «Աշխատանք Հայաստանում ավելի լավ ապագայի համար. աշխատատեղերի դինամիկայի վերլուծություն», Համաշխարհային Բանկ, Հոկտեմբեր, 2019:
2. Գենդերային անհավասարությունն աշխատաշուկայում. հիմնախնդիրները և լուծումները լոկալ և գլոբալ համատեքստում (գիտաժողովի նյութեր) / Գլխ. խմբագիր Շահնազարյան Գ. - Եր., ԵՊՀ հրատ., 2015:
3. Baskakova M.E., Soboleva I.V., Kubishin E.S. Gender and Youth Employment in the Commonwealth of Independent States: trends and key challenges, The Decent Work Technical Support Team and The ILO Office for Eastern Europe and Central Asia, Moscow, 2017.
4. http://employment.am/am/legislation.html
5. http://www.mlsa.am/?p=24223
6. http://www.mlsa.am/?p=25011
7. http://www.mycareer.am/arm/%D5%B4%D5%A5%D6%80-%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6/%D5%86%D5%BA%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF/
8. http://www.irtek.am/views/act.aspx?aid=101624
9. https://www.theglobaleconomy.com/Armenia/youth_unemployment/
10. https://ilostat.ilo.org/data/country-profiles/
11. https://cyberleninka.ru/article/n/professionalnaya-orientatsiya-molodezhi-kak-faktor-uspeshnogo-trudoustroystva/viewer
12. http://lori.mtad.am/files/docs/11628.pdf
13. https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/LMR%20Report_Eng.pdf
14. https://iwpr.net/global-voices/armenia-orphans-struggle-overcome-stigma

Հավելված 1

Փորձագիտական հարցման հարցաշար

Տվյալ հետազոտության նպատակն է իրականացնել «Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում» ծրագրի, ինչպես նաև զբաղվածության այն պետական ծրագրերի խորքային վերլուծություն, որոնք առնչվում են ընդհանուր տիպի մանկատների շրջանավարտների զբաղվածության իրավիճակին ու հեռանկարներին ՀՀում, վերհանել այն փաստարկներն ու հակափաստարկները, որոնք կնպաստեն այս հարցի շուրջ օրակարգի և հանրային քաղաքականության ձևավորմանը:

Հետազոտության շրջանակներում կիրառվող մեթոդներից մեկն է փորձագիտական հարցումը Դելֆի եղանակով, որի նպատակն է երեք փուլով հավաքագրել և վերլուծել տվյալ հիմնահարցի վերաբերյալ փորձագիտական կարծիքները: Այս եղանակով հավաքագրվող տեղեկատվությունն անանուն է, և հավաքագրումն իրականացվում է հեռավար տարբերակով՝ գրավոր: Հարցման արդյունքները ներկայացվելու են ընդհանրացված՝ որպես ստացված տեղեկատվության վերլուծության արդյունք:

1. Ներկայումս ՀՀ-ում գործող զբաղվածության պետական ծրագրերից որո՞նք կառանձնացնեք որպես առավել արդիական: Արդյո՞ք աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար նախատեսված ծրագիրը համարում եք այդպիսին և ինչու:
2. Ըստ Ձեզ, «Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում» ծրագիրը որքանո՞վ է նպաստում նրանց զբաղվածության մակարդակի բարձրացմանը:
3. Ինչպիսի՞ մեխանիզմներով կարելի է բարձրացնել այդ ծրագրի հասցեականությունն ու արդյուվետությունը (ներառյալ ծախս-արդյունավետությունը):
4. Ծրագրում ընդգրկվելու համար առաջնահերթություններից է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության (մանկատան) շրջանավարտ լինելը: Ձեր կարծիքով, որքանո՞վ է ծրագիրը նպաստում այդ երիտասարդների՝ աշխատաշուկայում ներառվածությանը և կայուն եկամուտ ունենալուն:
5. Ներկայիս սոցիալական քաղաքականության շրջանակներում մանկատան շրջանավարտները ճանաչվում են աշխատաշուկայում անմրցունակ: Ըստ Ձեզ, ինչու՞ են նրանք զբաղվածության առումով խոցելի:

6. Ձեր կարծիքով, ինչպես կարելի է խթանել ՀՀ մանկատան շրջանավարների ներառումն աշխատաշուկա:
7. Ըստ Ձեզ, ինչպիսի՞ն է սոցիալական պաշտպանության հաստատությունների (մանկատան կամ այլ) դերը վերոնշյալ հարցում:
8. Ներկայումս ՀՀ ԱՍՀ նախարարությունը վերսկսել է մանկատան շրջանավարտներին բնակարանային ապահովման ծրագիրը՝ որոշակի փոփոխություններ մտցնելուց հետո: Ըստ Ձեզ, ինչպիսի՞ն է ծրագրի արդյունավետությունը, և ինչպե՞ս այն կարող է ազդել այդ խոցելի խմբի զբաղվածության հարցի լուծման վրա:
9. Ձեր կարծիքով, ինչպիսի՞ նախապայմաններ են պետք ԱԾԽՄ կարգավիճակ ունեցած մանկատան կամ այլընտրանքային խնամք ապահովող կառույցների շրջանավարտների, այդ թվում նաև խնամատար ընտանիքից դուրս եկած երիտասարդների՝ աշխատաշուկա մուտք գործելու և դրանում արդյունավետ գործառնելու, կայուն եկամուտ ունենալու համար:
10. Ըստ Ձեզ, ի՞նչ հեռանկարներ ունի այդ առումով ներկայումս գործող սոցիալական քաղաքականությունը, ի՞նչ պատկեր կունենանք մոտ հինգ տարի հետո:
11. Տվյալ որոլորտում քաղաքականությունը բարելավելու ուղղությամբ ինչպիսի՞ առաջարկներ ունեք:

Շնորհակալություն մասնակցության համար:

Հավելված 2

ՀՀ զբաղվածության քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական կառույցների ու ՄԿԿԶԿ մասնագետների հետ ֆոկուս խմբի ուղեցույց

1. ՀՀ սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների կողմից Զբաղվածության տարածքային կենտրոններ ուղղորդված անձանց թվում մոտավորապես ո՞ր տոկոսն են կազմում մանկատան շրջանավարտները, որքանո՞վ է դիմելիությունը բարձր:
    - հիմանականում ո՞ր տարիքային խումբն է դիմում
    - անմիջապես մանկատնից դուրս գալուց հետո՞, թե մի քանի տարի անց են դիմում
    - արդյոք մանկատների տնօրինությունը որևէ կերպ օգնում է սաներին աշխատաշուկա մուտք գործելու հարցում.

- եթե այո, ապա ինչպես,
- եթե ոչ, ապա ինչու:

2. Ի՞նչ խոչընդոտների են բախվում մանկատան շրջաավարտները, այդ թվում երիտասարդ մայրերը աշխատաշուկայում՝
    - գործատուների հետ շփման մեջ
    - աշխատակազմի հետ շփման ու համատեղ աշխատանքի մեջ:
    - աշխատատեղ գտնելու և պահպանելու հարցերում:
3. Պետական ի՞նչ ծրագրեր են նախատեսված մանկտան շրջանավարտների համար, և որքանով է դրանում ներառված զբաղվածության կոմպոնենտը:
4. Ինչ դեր ունի մասնագիտական կողմնորոշման կենտրոնը մանկատների կամ ԱԾԽՄ կարգավիճակ ունեցած երիտասարդների՝ աշխատաշուկա մուտք գործելու հարցում: Որքանով են նրանք դիմում այդ կենտրոնին:
5. Ինչը կարելի է բարելավել վերոնշյալ երիտասարդների համար ներկայումս գործող ծրագրերում՝ առավել հասցեական ծառայություններ և շարունակական արդյունքներ ունենալու համար:

6. Ի՞նչ եք կարծում, առաջին հերթին ինչպիսի փոփոխություններ պետք է իրականացվեն երիտասարդների, մասնավորապես մանկատան շրջանավարտների, զբաղվածության ոլորտում: Ինչպիսի՞ առաջարկներ ունեք այդ ուղղությամբ:

Շնորհակալություն բոլորիդ մասնակցության համար:

Հավելված 3

ՀՀ աշխատաշուկայում ցածր մրցունակությամբ երիտասարդների՝ ընդհանուր տիպի մանկատների շրջանավարտների հետ ֆոկուս խմբի ուղեցույց

ԲԼՈԿ Ա ՆԵՐԿԱՅԻՍ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

- Ներկայացրե՛ք Ձեր հիմնական զբաղվածությունը ներկա պահին:
  - Կատարու՞մ եք վարձատրվող աշխատանք:
    - Եթե այո, ապա՝
      - Ի՞նչ աշխատանք եք կատարում:
      - Ինչպե՞ս եք կարողացել գտնել այդ աշխատանքը:
      - Ի՞նչ մասնագիտական դժվարություններ եք ունենում աշխատանքը կատարելիս:
      - Ի՞նչ խոչընդոտների եք բախվում գործատուի և գործընկերների հետ շփումներում:
      - Ի՞նչ հմտությունների և կարողությունների զարգացման կարիք ունեք Ձեր աշխատանքը ավելի լավ կատարելու, կամ այլ ավելի նախընտրելի աշխատանք գտնելու համար:
    - Եթե Ոչ, ապա՝
      - Փորձե՞լ եք գտնել հիմնական աշխատանք, կամ վարձատրվող այլ աշխատանք:
      - Եթե ոչ, ապա ինչու՞:
      - եթե այո, ապա ի՞նչ հարթակներում, կամ ի՞նչ միջոցներով եք փորձել աշխատանք գտնել:
      - Ի՞նչ պատճառով չեք կարողացել գտնել աշխատանք:
      - Ի՞նչ մասնագիտական հմտությունների պակաս եք զգացել աշխատանք փնտրելիս: Ի՞նչ հմտությունների պակասի կամ բացակայության համար են Ձեզ մերժել:
      - Ի՞նչ հմտությունների և կարողությունների կարիք ունեք Ձեր նախընտրելի աշխատանքը գտնելու համար:
      - Ի՞նչ խոչընդոտների եք բախվել գործատուների հետ շփման մեջ:
      - Ի՞նչ դժվարությունների եք բախվել գործընկերների հետ շփման մեջ աշխատավայրում:

- Ամենաշատը որքա՞ն ժամանակ եք աշխատել նույն կազմակերպությունում:

ԲԼՈԿ Բ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

- **Բավարարված ե՞ք արդյոք ձեր ներկայիս զբաղվածության կարգավիճակից:**
  - Ինչո՞վ կցանկանաք զբաղվել հետագայում:
  - Ի՞նչը զարգացնելու կարիք ունեք Ձեր նախընտրած զբաղվածությունը ունենալու հարցում:
    - Հմտություններ
    - Տեղեկատվություն
    - Ծանոթություններ
    - Այլ

ԲԼՈԿ Գ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՑ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

- Զբաղվածության պետական ի՞նչ ծրագրեր գիտեք:
- Այդ ծրագրերից որո՞նց եք դիմել:
  - Եթե չեք դիմել, ապա ինչու՞:
  - Եթե դիմել եք, ապա՝
    - Ծրագիրը նպաստե՞լ է աշխատանք գտնելուն:
      - Եթե ոչ, ապա ինչու՞:
    - Ի՞նչ այլ օգուտներ է տվել ծրագիրը:
    - Իսկ ի՞նչ բացասական կողմեր է ունեցել ծրագիրը:
    - Ինչը կարելի է բարելավել այդ ծրագրերում, որ Ձեզ համար ավելի օգտակար լինի:
- Եթե Ձեզ կարճ ժամանակով նշանակեին նախարար ՀՀ ԱՍՀՆ-ում, առաջին հերթին ինչպիսի՞ փոփոխություններ կիրականացնեիք երիտասարդների, մասնավորապես մանկատան շրջանավարտների, զբաղվածության ոլորտում:

ԲԼՈԿ Դ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԼՐԱՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ

1. Նշե՛ք խնդրեմ, Ձեր տարիքը:

1. 18-25
2. 26-40

2. Նշե՛ք, խնդրեմ, Ձեր կրթությունը:

1. Թերի միջնակարգ
2. Միջնակարգ
3. Միջին-մասնագիտական
4. Բակալավր
5. Մագիստրոս
6. Այլ

3.Նշե՛ք, խնդրեմ, Ձեր մասնագիտությունը:
_____

4. Նշե՛ք, խնդրեմ, թե քանի՞ տարվա աշխատանքային փորձ ունեք: _____
____

5. Նշե՛ք խնդրեմ, այն հաստիքը, որով աշխատում եք հիմա:
_____

6. 1-10 բալանոց սանդղակով գնահատե՛ք Ձեր մասնագիտական կարողությունները, որտեղ 1-ը ամենացածր գնահատականն է, իսկ 10-ը՝ ամենաբարձր:
1 2 3 4 5 6 7 8 9 10

7. 1-10 բալանոց սանդղակով գնահատե՛ք լեզուների Ձեր իմացությունը, որտեղ 1-ը ամենացածր գնահատականն է, իսկ 10-ը՝ ամենաբարձր:

Հայարեն	1	2	3	4	5	6	7	8	9	10
Ռուսերեն	1	2	3	4	5	6	7	8	9	10
Անգլերեն	1	2	3	4	5	6	7	8	9	10
Այլ	1	2	3	4	5	6	7	8	9	10

8. 1-10 բալանոց սանդղակով գնահատե՛ք Ձեր համակարգչային գիտելիքները, որտեղ 1-ը ամենացածր գնահատականն է, իսկ 10-ը՝ ամենաբարձր:

Շնորհակալություն բոլորիդ մասնակցության համար: